



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

18/66

29199
4-68

7641.

XVI 14

Handwritten text on a small, torn piece of paper, possibly a label or note, oriented upside down. The text is written in a cursive script and includes the words "Handwritten", "No.", "1894-1900", and "Lithograph".

Handwritten text on the left side of the page, oriented vertically. The text reads "The 1894-1900" and "Lithograph".



1907

891-99

4-68 և ՀՐԱՏԱԿՈՒԹԻՒՆ Ն. Ա. Դ.



Հ Ի Ր Ա Ի Ո Ր Բ Լ Բ Ո Ւ Լ

Ե Ր Գ Ե Ր

1001
3974

2 0 0 3

...Թող մեզ ուղեցոյց աստղի փոխարէն
Սուրբ հշմարտութիւն լուսափայլ վառուի.
Եւ հաւատացէք, որ ազնիւ ձայնը
Այս աշխարհի մէջ ի զուր չի անցնի...
Վ. Խ.



Թիֆլիս, Եւքարաշարժ տպարան «ՀԵՐԱՆՍ» Ընկ. 1907.

4135

ԱԶԱՏՆ ԱՍՏՈՒԱԾ...

(Միքայել Նալբանդեան)

Ազատն Աստուած այն օրից,
Երբ հաճեցաւ շունչ փչել,
Իմ հողանիւթ շինուածքին
Կենդանութիւն պարգևել:

Ես, անբարբառ մի մանուկ,
Երկու ձեռքս պարզեցի
Եւ իմ անզօր թևերով
Ազատութիւն գրկեցի:

Մինչ գիշերը անհանգիստ,
Օրօրոցում կապ-կապած,
Լալիս էի անդադար,
Մօրս բունը խանդարած:

Խնդրում էի նրանից՝
Բազուկներս արձակել.
Ես այն օրից ուխտեցի
Ազատութիւնը սիրել:

Թոթով լեզուիս մինչ կապերը
Արձակուեցան, բացուեցան,
Մինչ ծնողքս իմ ձայնից
Խնդացին ու բերկրեցան:

Նախկին խօսք, որ ասացի,
Չէր հայր կամ մայր կամ այլ ինչ,
Ազատութիւն դուրս թռաւ
Իմ մանկական բերանից:

Ազատութիւնն ինձ գրկեց՝
 Ճակատագիրս գրեց,
 Ազատութեան գու գինւոր
 Կամիս գրուել այս օրից:

Ո՛ր, փշոտ է ճանապարհը,
 Քեզ շատ փորձանք կըսպասէ.
 Ազատութիւն սիրողին՝
 Այս աշխարհը խիստ նեղ է:

Ազատութիւն գոչեցի,
 Թող որոտայ իմ զլխին
 Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
 Թող դաւ դնէ թշնամին:

Ես մինչ իմ մահ՝ կտխաղան,
 Մինչ անարգ մահու սիւն,
 Պիտի գոռամ, պիտի գրկեմ
 Անդադար Ազատութիւն:



ԱԶՆԻԻ ԸՆԿԵՐ

(Շահ-Աղիզ)

Ազնիւ ընկեր, մեռանում եմ,
 Բայց հանգիստ եմ ես հոգով.
 Իմ թշնամիքս ես օրհնում եմ,
 Օրհնում եմ քեզ Աստուծով:

Հեռանում եմ, անգին ընկեր,
 Զրգնահատուած ոչ ոքից.
 Բայց հաւատեալ անձնանուէր
 Ազգիս մշակ կըհաշուիմ:

Ազնիւ ընկեր, չըմոռանաս,
 Անդաւաճան ջերմ սիրով:

Ես սիրել եմ իմ հայրենիք,
 Գինս և դու նոյն շաւղով:

Խեղճութիւնը հայոց ազգին,
 Կարեկցաբար մտածիր.
 Ոսկէ գրքոյկն Եղիշէի՝
 Քաջ առաջնորդ քեզ ընտրիր:

Այնտեղ սուրբ կրօն, ազգ միաբան,
 Ազատ կամքով ու խղճով,
 Այնտեղ Վարդան, անմահ Վարդան,
 Իւր խնկելի քաջերով:

Հայրենիք սեղան սրբութեան
 Ես Աստուծոյ առաջի.
 Շատ կաղաչեմ, շատ կարտասուեմ,
 Որ ծագէ քեզ նոր արև:

Իմ մտերիմ, մահա մօտ է,
 Բայց հանգիստ եմ ես հոգով,
 Որովհետև խեղճս արգար է
 Ծշմարտութեան ջաղագով:

ԱՅԾԵԱՄ

(Զիւան)

Անհոգ ես, չեմ գիտէր, ինչ կայ քո մասին,
 Պարտում են քո խեղճ անձի փառսին,
 Գամբռներով, բարակներով միասին.
 Փախիր այծեամ, փախիր, որսկանն է գալիս,
 Զագուկներդ տխուր լալիս են լալիս:

Որսկանը ճրագով քեզի ման կուզայ,
 Կուզէ ձեռքը քո արիւնով լուսնայ,
 Խղճալի, բու տեղակ սար ու ձոր կուլայ.
 Փախիր, այծեամ, փախիր, որսկանն է գալիս,
 Զագուկներդ և այլն:

Որսկանը գութ չունի, կանէ կրակը,
 Կամ քեզի կսպանէ կամ քու զաւակը,
 Զուր չի անցնի հրացանի գնդակը.
 Փախիր, այծեամ, փախիր, որսկանն է գալիս,
 Զագուկներդ և այլն:

Դուրս մի ելիր խիտ անտառից դու բնաւ,
 Քեզ կը վիրաւորեն կը ստանաս մեծ ցաւ,
 Դաշտումը չես ման գար, թէ մտածես լաւ,
 Փախիր, այծեամ, փախիր, որսկանն է գալիս,
 Զագուկներդ և այլն:

Թ Ա Փ Ա Ռ Ա Կ Ա Ն

Անթիւ դարեր թափառելով՝
 Դարձեալ օտար հող մնացի.
 Իմ անուշիկ հայրենիքից
 Հեռու-հեռու բնակուեցի:

Հայոց քաջեր բարձրացրէք
 Ձեր գլուխը գերեզմանից.
 Տեսէք ձեր երջանիկ ազգը,
 Թէ ինչ վիճակի է հասել:

Հայ անունը ամենքի մօտ
 Դարձել է մի չնչին լոկ խօսք,
 Հայեր, հայեր, սթափուեցէք,
 Ձեր խոր քնից դուք զարթեցէք:

Փառք ու պարծանք և ոչ պատիւ
 Երբէք չեն հայերու համար.
 Այրուած սրտիս մէջը միայն
 Քեզ եմ սիրում—ազատութիւն:

ՀԱՅ ԲՈՒՐԺՈՒԱՅԻ ՅԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Ա՛խ, ինչպէս կուգեմ—տեսնել մեր հային
 Ազատ, ապահով, կըթեալ, ինքնագոհ.
 Ամէն հայի տունը դրախտ երկնային...
 Լոկ այդ բանը ինձնից չուզէնար մէկ գոհ:

Ա՛խ, ինչպէս կուգեմ—տեսնել Հայաստան
 Մի օր ազատուած թշնամու ձեռքից.
 Հայ երկիրը՝ հայի սեփական...
 Լոկ այդ չը բաժնէր ինձ իմ կօպէկէն:

Ա՛խ, ինչպէս կուգեմ, որ մեր հայերու
 Արծաձուկէր սէրը, ուսման զիտութեան,
 Հայի մէջ չը մնար մի հատիկ տգէտ...
 Լոկ հեռու ինձնից թուխտ ստորագրութեան:

Ա՛խ, ինչպէս կուգեմ, որ հայ պատանիք
 Դէպ համալսարան խմբով վազէին,
 Եւ Զուիցէրիայ երթար հայ աղջիկ...
 Լոկ ինձնից նոքա կօպէկ չուզէին:

Ա՛խ, ինչպէս կուգեմ, որ հայ երկիրը
 Ճեմարան, դպրոց, գրատուն ունենար,
 Ունենար թատրոն և շատ լրագիր...
 Լոկ նա ինձ փողի անունը չը տար:

Ա՛խ, ինչպէս կուգեմ, որ մեր գէյթունցիք,
 Միթռայօղ, շասպօ, ումբկէն ունենար,
 Զարթ ու փուրթ անէր քիւրդ ու չերքէզին...
 Լոկ ինձնից զէնքի նա փող չուզենար:

Երբ մեր հայրենիք հրաշքով ազատուէր,
 Մերոնք էլ ազատ կեանք, օր վարէին.
 Ա՛խ ինչպէս-ինչպէս լաւ բան կը լինէր,
 Երբ հայք, ինձ իրանց իշխան ընտրէին:

ԱՀԱ ԾԱԳԵՅ...

(Րաֆֆի)

Ահա ծագեց կարմիր արև,
Տաք և պայծառ է օրը,
Դէհ, քաղցեցէք, սիրուն եզներ
Առաջ տարէք արօրը:

Վարը վարենք, ահօս փորենք,
Խոր ահօսներ հողի մէջ,
Սերմը ցանենք, որ հունձ հնձենք,
Յորեն դիզենք կալի մէջ:

Կը գայ ձմեռ, մենք վախ չունենք,
Ուրախ կանցնի մեր օրը.
Ուտելու միշտ պաշար ունենք,
Լի և կուշտ է մեր փորը:

Դէհ, քաղցեցէք, սիրուն եզներ,
Շուտով վարենք արտերը.
Թո՛ղ չասեն մեր գրացիքը—
«Ծոյլ են Հասօյի եզներ»:

ՎԱՍՊՊՈՒՐԱԿԱՆ

Ախ Վասպուրական, տխուր Հայաստան,
Անթիւ հերոսներ քեզ մէջ ժողովեցան,
Ահեղ կռուի մէջ այսքան դիմացան,
Ի սէր ազգութեան նահատակուեցան:

Ոհ, բաւ է հայերս միշտ այսպէս գերի,
Թողնել հայրենիք դիմել օտարի,
Օտարը սիրում է մեզ իբրև գերի
Մեր հայու ջուրը դարձել է լեղի:

Ոհ, բաւ է, հայեր մեր անմիութիւն,
Պատիւ չբերեց մեր հայ ազգութեան

Պէտքէ մենք զտնենք միութեան դարման,
Որ ազատենք մենք մեր մայր Հայաստան:

Պէտքէ միանայ ամբողջ Հայաստան
Թող տեսնէ Եւրոպան ու Ամերիկան
Պէտքէ մենք լուծենք վրէժ հայկական,
Քանի այսպէս տխուր է Հայաստան:

Վան սիրոյ քաղաք իւր գաւառներով,
Լցուեց դիակներ հարիւր հազարով,
Ներկուեցան զաշտեր հայոց արիւնով
Ձայն տուեց ամբողջ երկինք աստղերով:

Տեսէր թիւրք ազգին ինչ անամօթ է,
Քաղցեց մեզ վերայ սուր և թնդանօթ.
Բայց երբ շողջողաց հայկական սուրբեր
Խաւարով պատեց թշնամեաց սրտեր:

Օ Ր Օ Ր

(Գամառ-Քաթիպա)

Արի իմ սոխակ, թող պարտէզ մէրին,
Տաղերով քուն բեր տղիս աչերին,
Բայց նա լալիս է, դու սոխակ մի՛ դար,
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ:

Եկ, արեղաձաք, թող արտ ու արօտ,
Օրօրէ տղիս, քնի է կարօտ,
Բայց նա լալիս է, դու ձագուկ մի՛ դար,
Իմ որդին չուզէ արեղայ դառնալ:

Թող դու տատրակիկ, քո ձագն ու բունը,
Վուվուլով տղիս բեր անուշ քունը,
Բայց նա լալիս է, տատրակիկ մի՛ դար,
Իմ որդին չուզէ սգաւոր դառնալ:

Կաշաղակ ճարպիկ, գող, արծաթասէր,
Շահի գրուցով որդաւս քունը բեր.
Բայց նա լալիս է, կաշաղակ, մի գար,
Իմ որդին չուզէ սովդադար դառնալ:

Թող որսդ, արի, բաջասիրտ բազէ,
Քու երգը գուցէ իմ որդին կուզէ...
Բազէն որ եկաւ, որդիս լռեցաւ.
Ռազմի երգերի ձայնով քնեցաւ:

ԱՐԱՁ

(Ա. Խաչակեան)

Արագն եկաւ լափին տալով,
Ժեռ քարերին տափին տալով,
Որտեղ թաղեմ ես իմ դարդը,
Ձոր գլուխս տափին տալով:

Այ իմ Արագ ջուրդ վարար,
Սիրուն եարիս եարաբ տեսմը,
Ես չրհասայ իմ մուրազին,
Արագ, եարաբ կարօտս առմը:

Ամպերն ընկան Մասիս սարին,
Կարօտ ֆնացի ես իմ եարին,
Աստուած սիրես—էրուած սրտիս
Ջուղար բերես եկող տարին:

Գիշերն անքուն գիր կը գրեմ,
Արտասունքս գետ կը շինեմ.
Արագ, ծէգը ջրիդ չառած,
Իմ սև դարդը քեզ կը բերեմ

Կասես շողքը բարին ընկաւ,
Կրակն իմ սրտիս մէջն ընկաւ,
Կամար ունքից, թուխ աչքերից
Ցաւն իմ ջիւան ջանս ընկաւ:

ԴԵՊԻ ՄԱՐՏ

Ահա մայրիկ, ես գնում եմ
Ազատութեան զոհուելու.
Քաջ ընկերներով միասին
Անգուծ քիւրդեր շարդելու:

Գերեզմանիս հողի վրայ
Մէկ անուշիկ հոտ մ' կար.
Այսուհետեւ, անուշ մայրիկ,
Ինձնից քեզ օգուտ չըկայ:

Երբ որ մայր իմ Սասուն եկար,
Ինձի ճրտեղ փնտրեցիր.
Գերեզմանիս վրայ գալով
Ի՞նչ ասացիր ու լացիր:

Գերեզմանիս հողի վրայ,
Ցանէ ծաղիկ, իմ մայրիկ,
Ցանէ ծաղիկ, թափէ արցունք,
Երիտասարդ եմ, մայրիկ:

Գերեզմանիս քարի վրայ,
Խոշոր տառով գրեցէք՝
«Այսուհետեւ, հայ մանուկներ,
Ազատութեան զոհուեցէք»:

*
*
*

Բերդիցը դուրս ելայ Ալագեազ տեսայ,
Խանում եւա ջան.

Աբարանը աչքիս տուման ա դառել,
Դուն կեցիր բարով, ես կերթամ լալով,
Լալով ողբալով, բեօջ ու բարխանով,
Խանում եմ ջան:

Ոչխարն էսդին կարծէ, էնդին գառները,
Կանաչել ա ծաղիկները, ծառները,
Արի երթանք քու ման գալած արտերը,
Քեզի տեսայ թագաջաւ իմ դարդերը:

Ձեռս ու ստս կապին՝ բերդը դրեցին,
Ձուխայ շալար լալով տունը բերեցին.
Ես Սուրենն եմ զազախեցի մէկ տղայ,
Տութսաղ եղայ երէք տարի մեղայ չէկայ:

ԲՕՅԸԴ ԲԱՐՁՐ

Բօյլդ բարձր սալբի չինար,
Աչքդ նախշուն, ունքդ կամար,
Դուն ստեղծուար ինծի համար,
Անգին ծաղիկ իմ, նոր բուսած:

Գոյնդ նման է մարմարի,
Հագիդ շորերն է յարմարի,
Դուն ես վարդը այս աշխարհի,
Անգին ծաղիկ իմ, նոր բուսած:

Քեզ տեսնելը, ինձ մեծ մահ է,
Հոգիս հանեմ տամ քեզ պահէ.
Ինձնից եղածը ինձի շահ է,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:

Ես քեզ տեսայ ծաղկանց միջին,
Աղաչեցի ես իմ Փրկչին,
Որ չը կտրէ յոյսն իմ վերջին,
Անգին ծաղիկ իմ, նոր բուսած:

Գիշեր ցերեկ նստայ լալով,
Աղի արտասունք թափելով,
Ինձ թողել ես տանջուելով,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:

ԲԱՐԻ ԳԵՂԵՑԻԿ

(Տիւան)

Բարի, զեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն
Փայլեցնում է արեւի պէս պատկերը մարդուն:
Ինչ մարդ ունենայ իւր մօտը հաւատարիմ ընկեր՝
Յերեկի նման անցնում է մութ գիշերը մարդուն:
Կեանքդ նուիրես ընկերի լաւին՝ քիչ է դարձեալ,
Այնպէս է հոգեակն լուսատու լապտերը մարդուն:
Ընկեր եմ ասում, Աստուածավախ, ճշմարիտ ընկեր,
Որ բարձրացնէ աստիճանը միշտ վեր մարդուն:
Թշնամիները իւր վրայ գալած ժամանակ,
Կտրիչ հարազատ ընկերն է սուրերը մարդուն:
Ով որ ունենայ մտերիմ ընկեր քեզի նման,
Ձի սպիտակի ամենևին մէկ հերը մարդուն:

ԲԱԶՈՒԿ

(Ա. Նեգրե)

Ճշում են հա անիւներն ու պտրտում փոկերը,
Եւ համերաշխ բանւորների լսում են զիլ երգերը,
Ամենուրէք իրարանցում շշուկ, աղմուկ, աննդհատ...
Յանկարծ այդ խուլ աղմուկի մէջ պայթեց մի ճիչ յուսահատ,
Կարծես այստեղ մահացու վէրք առաւ վայրի մի գազան
Ու կատաղի մենչոցով լռեցրեց ողջ գործարան:

Թշուառ, արդեօք կարող էիր երբևիցէ գուշակել,
Որ հաց տուող բազուկդ յաղթ չար մեքենան կը պոկէր
Տեսէք-տեսէք, սհ, այն ի՞նչ է նրա ուսից բաժանուածը
Ճքում են ահա անիւները պտրտում են փոկերը,
Բայց համերաշխ բանւորների աղմուկն է դադարած,
Ու լռել են, էլ չեն հնչում նրանց ուրախ երգերը:

Եւ արցունքը գլորուելով խառնուում է քրտնքին,
 էս սև օրը, ոչ առաջին, ոչ կըլինի և վերջին,
 Մօտորները հա ողբում են պատահարը սև օրուան,
 Ու գործում են նախկին թափով անցքը տալով մոռացման.
 Միայն ես եմ, ո՛հ, Արարիչ, որ աչքերիս առաջից
 Ձի հեռանում այն բազուկը, այնպէս սպիտակ, արնալից...

ԿՌՈՒՆԿ

(Ա. ԲԱՅԱՋԻԿ)

Բարով եկար, սիրուն կռունկ,
 Ի՞նչ լուր բերիր հայրենիքից,
 Խօսիր ինձ հետ ազատօրէն—
 Կեանքս կընւիրեմ ես քեզ:

Տեսա՞ր իմ հայրենեաց տունը,
 Գեղեցիկ զարդարուած գոյնը.
 Նրա սիրուն տանջւում եմ ես
 Աչքերիցըս կտրաւ քունը:

Ազատ տեսար մեր լեռները,
 Հազորդեցի՞ր դու իմ սէրը,
 Այն լեռներու պաշտպանողը,—
 Առիւծի կորիւն են նրանք:

Տեսա՞ր մեր փոքրիկ բուրաստան,
 Վարդ մեխակ շուշաններ շատ կան,
 Եղեմական դրախտավայր
 Նա կուչւում է Մայր Հայաստան:

Այնտեղ ունես եղբայր ու քոյր,
 Միջագ, ինչ կըսպասես իզուր
 Արի առնեմ իմ թևերուն—
 Գնանք այնտեղ ուրախացուր:

ԲԱՆՈՒՈՐ

(Ա. Նեգրի)

Մանում է թելը, պտտում արագ,
 Մինչ ես տասն և ութ հասած գարունքիս
 Ունիմ հուր աչքեր, սէր ու ճախարակ,
 Ապրում եմ անհոգ ,երգը շրթունքիս:

Ու թէ հերարձակ փողոցի միջով
 Անոցնում եմ մենակ օրը ցերեկով,
 Տեսնողը ասես սիրուցը գոհուած
 Վազում էր յետքէս զմայլում ինձնով:

Բայց ես ծաղրով եմ լուր պատասխանում
 Նրանց հրապուրիչ պակշոտ խօսքերին,
 «Նրա» համար եմ միայն պահպանում
 Գարնան ծաղիկս—սրտիս ընկերին:

Եւ գիտէ՞ք ով է իմ սրտի սիրած,
 Դարբինը հսկայ—իր սալի նման.
 Նրա քաջառողջ հասակի դիմաց
 Ես երևում եմ մանուկի նման:

Երբ կրակի մօտ երկաթ է ծեծում,
 Թափով զարկ տալով մէկ-մէկու հետքից,
 Երբ նրա վիզը քրտինք է պատում
 Ու կրակ ցայտում խոշոր աչքերից.

Այդ ժամ նրանով ես հպարտացած,
 Պատրաստ եմ փռուել նրա մերկ կրծքին,
 Սիրել անբաժան աշխարհ մոռացած,
 Դարձնել կուրծքս ու տիրել սրտին:

Բայց երբ իմ տանը ժամադիր եղած,
 Որոշուած ժամից անցնում է վայրկեան,
 Որպէս տանջւում է այդ ժամ իմ հոգին,
 Քար լինի ասես ընկած իմ կրծքին:

Յանկարծ լսում եմ դրսից ոտնաձայն,
 Նա շտապ-շտապ դուռըս է բաղխում,
 Վազում եմ առաջ յուզողւած ու անձայն,
 Դողում են ձեռքերս սիրտս բաբախում:

Յոգնած բանելուց՝ մրոտ երեսով
 Մտնում է դարբինս ժպիտը դէմքին,
 Եւ մի վայրկեանում ուժեղ թևերով
 Տեսնում եմ փռուեց նա իմ լայն կրծքին...

Այդպէս միացած խոր հրճուանքի մէջ
 Զարկում են զոյգիս սրտերը անվերջ...

ԳԻՇԵՐԸ ՎԱՆՈՒՄ

Մի գեղեցիկ, պարզ գիշեր էր.
 Երկինքը լի աստղերով,
 Եւ լուսինը մեղմ փայլում էր
 Կաթնանման իւր լուսով:

Նա նայում էր լռիկ-մնջիկ,
 Իբրեւ մի կոյս դէպի Վան.—
 Նրա աչքին երևում էր
 Բիւր ցաւալի տեսարան:

Նա տեսնում էր անթիւ քրդեր,
 Բռնած սուր, թուր, հրացան.
 Կռտորում են, կողոպտում են,
 Աւերում են Հայաստան:

Եւ կարծես թէ երկնքիցը
 Ասում էր այդ լուռ վկան—
 «Վրահասիր հայ ազգասէր,
 —Ձեռքից գնաց Հայաստան:

ԱՂԱՍԻ

(Եւ. Արովհան)

Մար ու ձոր ընկած՝ մէկ չոր թփի տակի
 Գետնին նայելով մնացել եմ նստած
 Ձեռս ծոցումս, գլուխս մէկ լեռ քարի,
 Տուած լալիս եմ օրըս խաւարած:

Ամպերն առաջիս, սարերն ետեիս,
 Քեզ մտիկ տալով, այ իմ քաղցր Մասիս.
 Աղի արտասուէքով էրուած խորովումս,
 Երեսիդ նայեմ մնամ քարացած:

Ծրնող, ազգականը հեռու ինձանից,
 Լուսնին նայելով, ձեր սէրն յիշելով,
 Եարաք երբ կրլի, որ ես ձեզանից
 Իմ կարօտս առնեմ ձեզ ջան ասելով:

Աչքս ծով դարձաւ ճամբին նայելով,
 Մէկ աշուղ, որ գլխիս պըտիտ է գալիս,
 Թէ երբ մէկ խաբար կըհասնի ինձ բարով,
 Հոգոց հանելով՝ ասում եմ, լալիս.

«Նազը՛ւ, իմ Նազը՛ւ, աննման Նազը՛ւ,
 Սիրտս խորովուի անունդ յիշելով.
 Նազը՛ւ իմ Նազը՛ւ, հրաշալի Նազը՛ւ,
 Աղասին քեզ տայ իր հետին բարով:

Սարերի դռին, ձորերի միջին
 Վայ գլխին տալով քո խեղճ Աղասին.
 Երեսիցդ զրկուած քո սիրոյ մաշուած.
 Տատրակի նման փշի վերայ նստած:

Նազը՛ւ, իմ Նազը՛ւ, մէկ շունչս է մնացել,
 Ոսկերքըս քրքր-քրքրուել, աչքերս խաւարել.
 Թող մէկ շունչ առնեմ, յետոյ հողը մտնեմ,
 Դժոխք էլ տանեն, հանգիստ կրլինեմ:

Քեզ եմ մնում, քեզ, քո ջանին մեռնեմ,
 Հող ու գերեզման ես վրէս ունէմ,
 Քանց իմ սառը մարմին, էլ ի՞նչ գերեզման
 Ինչի՞ պէտք կուգայ, երեսիդ զուրբան:



ՀԱՅՐԵՆԻՔ

(Պատիւ)

Քաղցրիկ հայրենիք, սրտիս դուրեկան,
 Դու իմ ծննդեան տեղ նուիրական,
 Արդեօք մինչև երբ հողիցդ զրկուած
 Պէտք է թափառեմ երկիրներ կորած:

Ա՛խ, երբ յիշում եմ քո հողդ ու ջուրըդ,
 Սիրտս այրում է քո սիրոյ հուրըդ,
 Ու միշտ ուզում եմ քեզի տեսնելու,
 Սրտիս սրբազան կարօտս առնելու:

Ճիշտ է, շատ մարդիկ քեզ չեն ճանաչում,
 Հարստացողն էլ վրադ չի նայում.
 Բայց ես սիրում եմ ոչ թէ անհարմար,
 Կարող եմ ասել ինչպէս սիրահար:

Ոսկին ամենքի խելքն է գրաւել,
 Մարդոց սրտերը բարեխօս դարձել,
 Սուրբ են համարում և նուիրական
 Թէ ինչպէս պահեն ոսկին պատուական,

Նայեցէք երգողիս, դուք հայ եղբայրներ,
 Կարդալով յիշեցէք ձեր սար ու ձորեր
 Գոնէ դուք երիտասարդներ ^{սէ} անկէք,
 Դէպի հայրենիք, ուր դուք ^{ծուել} էք:



Մ Ա Ր Տ Ա Հ Ր Ա Ի Է Ր

Ազատութեան այն վառ սէրը —
 Թունգ որտաց իմ սրտում,
 Իմ հայրենեաց սուրբ անունը
 Ինձ պատերազմ է, կանչում:

Ելէք, ելէք հայկազունք,
 Ելէք Հայկայ զաւակունք,
 Ելէք, ելէք հայ եղբայրներ
 Առնենք մեր սուր նիզակներ:

Այս օրերում մեր քաջ կեանքը
 Նուիրական թող լինի,
 Ով սիրում է ազատութիւն՝
 Թող չը մոռնայ հայ անուն:

Ահա կտրիչ հայ եղբայրներ,
 Առնենք զրահ, սուր զէնքեր.
 Մահը դաշտում շաւարշանայ
 Մեզ հրաւէր է կարգում:

Ա՛խ հայրենիք, քո սուրբ անուն,
 Անջինջ մնայ իմ սրտում.
 Իմ հայրենեաց շիրիմները
 Ինձ իրանց մօտ են կանչում:



ԳԱՐԱՀԻՍԱՐ

(Ջիւան)

Գարահիսար լեռան կրծքին
 Նա ընկած էր վիրաւոր,
 Կուրծքը պատռուած, սիրտը խոցուած,
 Չար թշնամու գնդակից:

Ժայռոտ լեռան լերկ կատարից
 Վայր սլացիր սև արծիւ,

Թեւերդ բաց, լայն թեւերդ,
Ու Զիւանին հով արայ:

Խոցուած սրտից մուգ արիւնը
Կաթիլ, կաթիլ կը ծորայ:
Ախ Պետոյի կեանքն է հոսում
Յաւոտ կը ծրի լայն վերքից:

Ժայռոտ լեռան լերկ կատարից
Վայր սրացիր սև արծիւ:
Թեւերդ բաց, լայն թեւերդ
Ու Զիւանին հով արայ:

ԳԵՒՈՐԳ ՉԱՒՈՒՇ

(Նուէր)

Թուրքը լսաւ անուշ Չաւուշ,
Դէմքդ սիրուն լեզուդ անուշ,
Կեանքիդ մէջ հանգիստ չունեցար
Թշնամեաց դարձրիր ապուշ:
Սասունն է քո ապաստան,
Վրէժը քո դատաստան:

Հայոց համար սպարապետ
Անդրանիկին ընկեր վարպետ.
Սասունը կանգուն պահեցիր,
Օգնող է քեզ սուրբ Կարապետ:
Սասունն է քո և այլն:

Կոտորեցիր թշնամեաց վաշտ,
Թուրք արիւնով ներկեցիր դաշտ,
Անվախ հերոս թուրքաց դէմը
Մինչև վերջը մնացիր անհաշտ:
Սասունն է քո և այլն:

Անվախ հերոս, դու ճշտապէս,
Հայք պիտի յիշեն մշտապէս.
Քաջաց-բաջ ես Գեորք սարդար,
Վարդանի տիպ ես խնայէս:
Սասունն է քո և այլն:

ԳԱՐՆԱՆ ՕՐ.

(Պատիւ)

Գարնանային զուարդ օր էր,
Երկինքը պարզ ջինջ պայծառ,
Եւ արեգը իր շողերով
Լուսաւորում էր աշխարհ:

Քաղքից դէպի հարաւ,
Դէպի փոքրիկ Խանի թումբը,
Կանաչագիւղ դաշտի միջով
Անցնում էր մարդկանց մի խումբ:

Այդ խմբի մէջ կայի և ես.
Իմ սիրելի ընթերցող,
Բայց մենք ուր ենք գնում տխուր
Ինչո՞ւ չկայ հարցնող:

Ընկերներս ձեռքում բռնած
Տանում էին մի դադաղ,
Որ գոյնգոյն ծաղիկներով
Զարդարուած էր խիստ չքնաղ:

Ահա նորա մեռելների
Հասան անկեանք բնակարան,
Ուր վաղորօք ուռնում տակ
Փորում էր մի գոռ տապան:

Դադաղը ցած դրին ձեռքից,
Միջին ննջում էր մի կոյս,
Մի գեղեցիկ չը-հաշխարիկ
Երկնքից գոռած կառնէս տա:

Դա Աննան էր, սիրուն Աննան,
 Նոր աստղիկը Կովկասի,
 Նորա ճակատը փայլում էր
 Պէս գագաթը Մասիսի:

Նա մեռած չէր, հայ եղբայրներ,
 Այլ ննջում էր մի առ ժամ,
 Պաճառ կարող չէր մերձենալ—
 Նըրայ մահը անըզգայ:

Բայց վայ գլխիս, ահա դրին
 Նորան մահու դարբասում,
 Եւ փափկասուն օրիորդը՝
 Այն էլ թաղուեց սե հողում:

Աննա, հոգիս, էլ ինչո՞ւ ինձ,
 Թողնում ես այս աշխարհում,
 Ո՛հ, բաղդաւոր կըլինէի,
 Թէ անկիւն տաս քո կողքում:

Ի սէր Աստծոյ, հայ եղբայրներ,
 Ինձ էլ դէք գերեզման.
 Նա կը խըղճայ, ինձ կընդունի,
 Շատ բարի է իմ Աննան:

«Յնրուած է—մարդիկ ասին,—
 Կամ զիւահար պատանին».
 Այսպիսի շատ կասկածներով
 Թողին ինձ և հեռացան:

Իսկ ես երկար նայում էի
 Աննայի անլոյս խրճիթին.
 Բայց իմ դուռը դրբութիւնը
 Չը շարժեց գութը երկրին:



ԴԱՐՁԵԱԼ ՓԱՅԼԵՑ

Դարձեալ փայլեց Սասնոյ գլխին
 Ազատութեան դրօշակ,
 «Կեցցէ հայրենիք» — գոչելով՝
 Բարձրացրին աղաղակ:

Թնդաց, որոտաց ձայներից
 Ողջ աշխարհը հայկական.
 Խումբ-խումբ կը դան հայ դաւակներ՝
 Հայրենիքին օգնութեան:

Գուրգէն, Վահան, Հրայր (Դժողք),
 Քաջ Անդրանիկ ղեկավար,
 Տալուրիկի յեռներումը
 Շրջում էին անդադար:

Սարսափեցին քուրդ ցեղերը,
 Մինչ պալատը սուլթանի,—
 Հրամայեց շուտ կործանել
 Դիրքերը հայդուկներին:

Ահա անգութ քիւրդ ու տաճիկ...
 Սարսափելի տեսարան...
 «Ժամանակ է վրէժ լուծել»,—
 Գոչեց ձայնը հայկական:

Կրակ տեղաց, հայ քաջերի
 Բնակավայր դիրքերից,
 Կոտորուեցին քիւրդ ու տաճիկ
 Ահուբի գնդակներից:



ԴԱՐԴՍ ԼԱՅԷՔ

(Ա. Խահակեան)

Դարդս լացէք սարի սմբուլ,

Ալւան, ալւան ծաղիկներ.

Դարդս լացէք, բաղի բլբուլ,

Ամպշող երկնուց զով հովեր:

Երկինք, գետինք գլխուս մթնան,

Անտուն, անտէր կուլամ ես.

Եարիս տարան, ջանիս տարան,

Հունգուր հունգուր կուլամ ես:

Ախ, եարս ինձի հանեց մտքէն,

Անճար թողեց ու գնաց,

Սրտիս սաւդէն, խորունկ եարէն

Անդէղ թողեց ու գնաց:

Դարդս լացէք, սարի սմբուլ,

Ալւան, ալւան ծաղիկներ.

Դարդս լացէք, բաղի բլբուլ,

Ամպշող երկնուց զով հովեր:



ԱՆՊԷՏՔ ՄԱՐԴԸ

Դուն խելօք, հաշուով վաճառական ես,

Միւլք, փող ու ապրանք, կասեն, շատ ունես.

Բայց թէ փոխէդ շահ չունի Հայաստան,

Թքել ենք քու ալ, փողիդ ալ վրան:

Քաջ ես, լսել ենք, ինքդ մեծաւոր,

Անունդ յաղթողի ունիս փառաւոր.

Բայց թէ թրէդ շահ չունի Հայաստան,

Թքել ենք քու ալ, թրիդ ալ վրան:

Ի վերուստ քանքար քեզի տուած է,
Հեղինակ անունըդ աշխարհ փռուած է.

Բայց թէ դրչէդ շահ չունի Հայաստան,

Թքել ենք քու ալ, դրչիդ ալ վրան:

Հեռատես մտքով դու զարգարեցար,

Հօր իշխանի սիրելին դարձար.

Բայց մտքէդ շահ չունի Հայաստան,

Թքել ենք քու ալ, մտքիդ ալ վրան:

Բանակ ու ճարտար դուն ունիս ձեռքեր,

Շատ կը հորինես թանգագին բաներ.

Բայց թէ ձեռքէդ շահ չունի Հայաստան,

Թքել ենք քու ալ, ձեռքիդ ալ վրան:

Երկինք շնորհեց քեզ լեզու ճարտար,

Քարոզիչ դարձար հռչակ ու հանճար,

Բայց թէ լեզուէդ շահ չունի Հայաստան,

Թքել ենք քու ալ, լեզուիդ ալ վրան:

Մեծ ուսում առիր, եղար գիտնական,

Գովքովդ լցուած է մարդոց բերան,

Թէ ուսումէդ շահ չունի Հայաստան,

Թքել ենք քու ալ, ուսմանդ ալ վրան:

* * *

(Պատիւ)

Դուն ուզում ես, որ հնչեցնեմ

Սրտիս քնքոյշ լարերը,

Որ լարերից երգեր հիւսեմ,

Ու երգեմ այդ աչերը:

Բայց ես, աւաղ, էլ սիրտ չունեմ,

Նա վաղուց է խորտակուած,

Գեղ աչերդ ինչպէս երգեմ

Էս քնարով ջախջախուած:

Ես մէկ ծառ եմ ծիրանի,
 Հին արմատ եմ անուանի,
 Պտուղներս քաղցրահամ,
 Բոլոր մարդկանց պիտանի:

Հին ծառ եմ Արևելեան,
 Չունեմ որոշ այգեպան,
 Տուններս ամեն երկիր
 Ընկած են բաժան-բաժան:

Արևելքում ինձ անկեց,
 Երբ որ Աստուած սաեղծեց,
 Ասաց «աճէ, բազմացիր»
 Մի այգի էլ ինձ տուեց:

Ուղարկեց մի այգեպան,
 Հարաւից հսկայ իշխան,
 Այն հսկայի անունով
 Կոչուեցայ ծառ հայկական:

Չորս հազար տարուայ ծառ եմ,
 Արմատով պինդ կայտառ եմ,
 Թէպէտ ոյժս պակաս է,
 Բայց անունով պայծառ եմ:

(Ս. Շահ-Աղիզ)

Ես լսեցի մի անուշ ձայն,
 Իմ ծերացած մօր մօտ էր,
 Փայլեց նշոյլ ուրախութեան,
 Բայց ափսոս, որ երազ էր:
 Կարկաչահոս աղբիւրն այնտեղ,
 Թաւալում էր մարգարիտ,

Նա հատակ էր, որպէս բիւրեղ,
 Այն երազ էր ցնորամիտ:

Եւ մեղեդին ախուր մայրենի՝
 Յիշեց մանկութեան օրեր,
 Մօրս համբոյրն ես զգացի,
 Ախ, ափսոս, որ երազ էր:

Կրծքին սեղմել կարօտագին,
 Աչքերը սրբեց շատ թաց էր,
 Բայց արտասունք գնում էին...
 Ախ, այդ ինչո՞ւ երազ էր:



(Պատիւ)

Ազատութեան սէրը աւաղ,
 Ինձ դուրս հանեց հայրենիքից,
 Ես անմեղ մի պատանի՝
 Գերի դարձրեց թշուառի:

Ես լսել եմ ծնողներիս վիշտը
 Ամեն անցնող թռչունի բերանից.
 Գիշեր, ցերեկ միշտ լացում են
 Ու հարց անում ինձանից:

Լսէք, խնդրեմ, հայ եղբայրներ,
 Ինչ լուր տանեմ սպասողներին,
 Նոքա լսել են արդէն վաղուց
 Նեղ օրերը իմ կեանքին:

Էլ չեմ ուզում լուր ուղարկեմ,
 Որ իմ վիճակս հաղորդեմ,
 Ես գնում եմ հեռու աշխարհ,
 Գոնէ այնտեղ տեսնեմ ազատութիւն:

ԳԱՐՈՒՆ

(Պատիւ)

Արի դու գարունն ողորմայ մեզի,
 Թէ մարդ անասուն կը սպասեն բեզի.
 Այս գիժ ձմեռը կողոպտեց մեզի,
 Զըթողեց մեր մէջ սէր կամ բարի:
 Արի դու գարունն, փրկէ հանճարին,
 Օգնութեան հասիր բոլոր թշուառին
 Պարգևիր անձրև մեր հովիտներին,
 Հաստատիր օրինակը դու գարնանային:
 Մաքրէ օդը, լուայ անձրևով,
 Զարդարէ գետին կանաչ խոտերով,
 Զարդարէ անտառ, այգի և պարտեզ,
 Թող բացուի վարդը, մանուշակ և նարգէզ:
 Արի, ո՛վ գարունն, շուտով դու հասիր,
 Արի դու սիրուն, մայսին մի սպասիր,
 Այդ գիժ ձմեռուայ խօսքը մի լսիր,
 Մեր խեղճ գիւղացոց օգնութեան հասիր:

ԱՂՋԿԱՅ ՎԵՐՔԸ

(Պատիւ)

Օ՛, անմեղ տեղից քանի զուր տանջանք
 Բերում ես դու մեզ, անողոր սև կեանք,
 Զէ, էլ չենք տեսնիլ մրիթթարութիւն,
 Զէ, չի պակսելու մեզ թշուառութիւն:
 Տեսայ ես մի օր—թևը աղջկան
 Զարդել էր, կախել արագ մեքենան,
 Ասես թէ կսկիծ, խուլ հառաչանքներ,
 Եւ արիւնալից սև տեսարաններ
 Էին պահանջում մեռած ոգիներ.
 Օ՛, երանի թէ իմանաք դուք էլ,

Քանի տառապանք, վշտեր անհամար—
 Տանում է մարդը սև հացի համար:

Խեղճ բանւորականը այժմ ինչ անի,
 Կարիքի հոգսը արդեօք կտանի...
 Հարուստը նրան հօ չի մօտ գալու,
 Այս կրակ ցաւին լուծումն տալու:

ԱՀՂ ԱՍՊԱՐԷՉ

Ահա մի նոր ասպարէզ ևս բացուեցաւ,
 Խմբուեցէք զինւորք Սասուն երթալու,
 Մայր Հայաստանը սպասում է մեզ,
 Մեզու թ քիւրդերի դէմ կռիւ մղելու:

Զենքերս առնենք, կռուի դաշտ վազենք,
 Անվախ կռուենք չար բռնութեան դէմ,
 Հայկական դրոշ ձեռքս բռնած
 Գազան սուլթանին հասցնենք հարուած:

Մարտնչենք այնպէս, ինչպէս քաջ թուման,
 Եւ այդ զենքերով փրկենք Հայաստան,
 Խրախոյս առէք, ով խմբապետներ,
 Վրէժ են կոչում մեր նահատակներ:

Հրաւէր կը կարդան, ով քաջ հայդուկներ,
 Զարդել անցկենալ թշնամու դիրքեր,
 Արդէն փայլում է հայի դրօշակը
 Մօսին հրացան, յուշտ գնդակը:

* *

Ես գնում եմ հեռու երկիր,
 Իմ սիրելի թանգակին,
 Բաժանում եմ ես քեզանից,
 Գուցէ կրկին չըգառնամ:

Կանչում են բալի միջին—

Ոստիկանները սոսկալի.

Ցանկանում եմ բեզի տալու՝

Սէրոյ համբոյրս վերջին:

Վեր կաց, սիրուն, քո ձեռքովդ

Մէջքիս կապէ սուր, հրացան,

Պատերազմի փողն հնչեցին

Պիտի մտնեմ գէնքի տակ:

Մնաս բարեաւ, իմ սիրելիս,

Իմ թանգակին բարեկամ,

Միշտ աղաչէ Աստուածանից,

Որ կենդանի յետ դառնամ:

Ազատութեան սիրոյ համար

Աշուղ—երգիչ եմ դառել.

Գերեզմանս մէկ բարի տակ

Դուք պիտ փորէք սև հողում:

ՄԻԱՆԱՆՔ

Եթէ կամինք փրկել թշուառ հայրենիք,
Նախ պիտ կապենք մեր մէջ մի սիրտ ու հոգի,
Եթէ կամինք անցեալ փառքին տիրանալ,
Հարկաւոր չէ կուսակցութեան բաժանուել:

Արիք, եղբայրք, միանանք,

Բաւ համարենք մեր տանջանք,

Ի սէր ճնշուած հայ ազգի—

Գործ դնենք մեր ձիգ ու ջանք:

Մեր պապերն էլ ներկայիս պէս գործեցին,
Որ մեր տունը իրանց ձեռքով քանդեցին.

Ուրիշների սուտ պարգևին շլացած—

Մեզ մասնեցին մինչև այժմ գերութեան:

Արիք եղբայրք և այլն:

Մենք Հնչակ ենք, եղբայրք դուք Դաշակցական,

Մենք երկուսս էլ կուլանք վիշտը հայկական,

Արիք վճռենք, հոգով, սրտով միանանք,

Ձեռք-ձեռքի տանք ապա գործենք արշաւանք:

Արիք եղբայրք և այլն:

Մի նպատակ և մի վսեմ գաղափար,

Մեզ կըսպասեն անհամբեր ու անդադար,

Ոռխտենք, եղբայրք, յայտնենք սրտի միութիւն,

Միութիւնով պիտի գտնենք փրկութիւն:

Արիք եղբայրք և այլն:

ՄՇԵՑՈՒ ԱՂԱԶԱՆՔԸ

Ես մշեցի ճամբորդ եմ, հեռու տեղերէն,

Ձեզ շատ բարև եմ բերել հայ գիւղերէն.

Աղպերքս ինձ ղրկեցին գէպի էս կուման—

Մի վախենաք, չեմ ուզում ձեր մանէթն ու թուման:

Վարադայ սուրբ խաչէն բերել եմ ձեզ լուր,

Խղճացէք հայ ազգիս, տւէք մէկ-մէկ թուր.

Հայ ազգը մեր տեղ նեղ օր կըքաշէ,

Օսմանլին ու քիւրդը կեանքներս կըմաշէ,

Օր կլլայ, գերեվար կանէ մեր տղոց—

Օր կլլայ, արտերը կըձգէ կրակ, բոց:

Թող չօգնեն, մենք էլ շուտ կլինք ցիրուցան—

Խղճացէք հայ ազգին, տուէք մեզ հրացան:

Սուրբ ժամներս դարձուցին անասնոց կայանք,

Խորհաններս պղծեցին, քանդեցին սուրբ վանք,

Խաչը ոտքով փշրեցին, տեղը դրին լուսնեակ,
Խեղճ հայը օրն ի բուն ծաղր է ու ծանակ:

Ո՛վ եղբայրք, բերել եմ ձեզ այսպէս սև բօթ,
Չուզենք մենք ձեր փարան, տուէք թնդանօթ:

Այսքան շատ տանջանքին ինչպէս դիմանանք,
Մինչև երբ ձեր դիմաց անհոգ պիտ մնանք,
Մեր ազգը տէր չունի սլաւոնի նման,
Բարի դուք լինէք մեզի օգնական:

Հոգիներս տրոբւած է ջաններս ցաւօտ,
Չուզենք ձեր ոսկին, տուէք մեզ վառօդ:

Շատ տառապանք քաշեցինք, դուշմանի զէնքէն,
Շատ էլ մահ դուշմանը կերաւ մեր ձեռքէն,
Առանց դրան աշխարհը մերը չէր բազմամարդ,
Հիմի փուշ կրբուսնի, ուր առաջ էր վարդ:

Բայց մենք ձեր սունդուկի փողի կարօտ չենք
Հայ եղբայրներ, խղճացէք տուէք մեզ մէկ-մէկ զէնք:

* * *

Եթէ մի օր, անուշ ընկեր,
Գաս այցելու իմ շիրիմին,
Ու նորաբոյս վառ ծաղիկներ
Տեսնես փռուած չորս կողմին:

Դու չը կարծես, թէ հասարակ,
Ծաղիկներ են ոտքի տակ,
Կամ թէ գարունն է այն բերել՝
Իմ նոր տունը զարդարել:

Նրան չերգած իմ երգէրէն,
Որ սրտումս ես տարայ,
Նրանք սիրոյ այն խօսքերն են,
Ուր դես չատած ես մեռայ:

Նրանք իմ ջերմ համբոյրներն են,
Այն աշխարհից ուղարկուած,
Որի ճամբէն քո առաջ
Գերեզմանով է փակուած:

(Պատիւ)

Ես տեսայ նրան եղբայր, գունաթափ
Ընկած այն մահճի վերայ կիսաշունչ,
Չկար տանջանքին ոչ համար, ոչ ճար,
Բայց նա կրում էր լուր ու անտրտունջ:

Ես տեսայ նրան իր ձեռքը մեկնած,
Առնում էր փունջը սուրբ հրեշտակից,
Որքան արտասուք, ողորմած Աստուած,
Թափւում էր նրա անմեղ աչքերից:

Ես տեսայ նրան իր դէմքը շրջեց,
Եւ մի խիստ նուազ, մի խիստ սրտաշարժ
Ձայնիւ «անխ» քաշեց ու խոր հառաչեց,
Եւ ապա իր թոյլ գլուխը թեքեց:

Ես տեսայ նրան, նա ինձ կանչում էր,
Ո՞հ այն ինչ ցաւ էր նրան տանջում էր,
Ա՛խ նա, և մահու դարբասի շէմքում՝
Ինձի մոռանալ երբէք չէր ուզում:

Հրամայիր, հոգիս, լեզուն փակուել էր,
Բացիր աչքերդ, ու կարծես ասում էր.
«Ընդունիր վերջին իմ հրաժարական.
Միայն չը տաս դու ինձ մոռացութեան»:

Ես տեսայ նրան աչքերը փակեց,
Ա՛խ շատ ձայն տուի, ոչ, էլ չը բացեց,
Բռնեցի ձեռքը, վայ, ինչ պաղել էր,
Նրա գեղնած կուրծքը ոչ էլ զարկում էր:

Այս ինչ է, Աստուած, միթէ նա մեռաւ,
Գուցէ երազ էր, ոչ, անհետացաւ,
Բայց դու թշուառ մահ, ինչո՞ւ այդպէս շուտ
Անցար գնացիր, ինձ էլ տար անգութ:

Ձէնքերս տուր մայրիկս,
Սուրերս տուր քոյրիկս,
Թէ որ ազգիս չըզոհուեմ,
Ապա ինչու ծնար զիս:

Ազատութեան վառ սէրը—
Ինձ հանել է լեռները,
Թշնամու դէմ կռուելու,
Հայրենիքս փրկելու:

Առաւօտ արշալոյսին
Զարս կողմերս պատեցին,
Զորս ցերեկ և չորս գիշեր
Անհամար թշնամիներ:

Լեռն սուրդ քաշեցիր,
Վրէժ առնել ուզեցիր,
Երբ որ գնդակը դիպաւ՝
«Ա. խ բնկեցնե՛ր» գոչեցիր:

Մայր անունս է Արամեան,
Մականունս է Կորկոտեան,
Երբ որ բանտից կազատուեմ
Դարձեալ խմբեր կը կազմեմ:

Զինուած, պատրաստուած, Ձէյթունի բաշեր,
Սուրբ ազատութեան վառուած անվեհեր,
Վրէժով լցուած առիւծի նման—
Քաջ-քաջ կռուեցին քիւրդի հետ դաժան:

Կեցցէ՛ք դուք միշտ զէյթունցիք,
Որ պիտ փրկէք հայրենիք,
Հայաստանի դուք պարծանք,
Մեր կեանքներս էլ ձեզ կուտանք:

Օրօրօցիս մէջ ինչ ես կաշկանդել,
Քանդէ կապանս, ես կուգեմ կռուել,
Տուր ինձ հրացան և մի սուր դաշոյն,
Ես կուգեմ կռուել ի դէմ թշնամուն:

Կեցցէ՛ք դուք միշտ և այլն:

Մանուկ օրօրօցում աչքերս բացած
Խնդրում եմ Մայրիկիս, «բազուկներս բաց»
Զեմ ուզում հանգիստ օրօրօցում—
Երբ եղբայրքս են միշտ լաց ու կոծում:

Կեցցէ՛ք դուք միշտ և այլն:

ԹՈՂ ՓԶԷ ՔԱՄԻՆ

Թող փչէ քամին պաղ-պաղ երեսիս,
Վերեն ամպերէն սաստիկ ձիւն թող գայ,
Որքան որ կուզէ թող փչէ հիւսիս,—
Յուսով եմ վաղ, ուշ գարունը պիտ գայ:

Թուղալը թող փակէ երկինքը պայծառ,
Թանձր մարախուղ երկիր թող պատէ,
Տարերք աշխարհի խառնուեն իրար,
Յուսով եմ, վաղ, ուշ արև պիտ ծագէ:

Թող գայ փորձութիւն, թող գայ հալածանք,
Խաւար թող դառնայ անաղօտ լոյսը,
Սարսափելի չեն հայի տառապանք,
Միայն... չի հատնիր խղճուկի յոյսը:

ՀԱԶԱՐ ԵՐԱՆԻ...

Հազար երանի բեզ, մանուկ անբիծ,
 Որ շուտ հեռացար դու այս աշխարհից,
 Ուր վաղուց ի վեր ունի բնակութիւն
 Անմեղութեան հետ մոլի չարութիւն.
 Բայց այն ո՞վ գիտէր բեզ ինչ էր սպասում
 Փշոտ, տատասկոտ այս մեր աշխարհում:
 Միթէ յաւիտեան պիտի մնայիր
 Հանգիստ գրկի մէջ քո մօր սիրալիր.
 Կամ թէ յաւիտեան բեզ պիտի ժպտար
 Գարնան վարդի պէս այս օտար աշխարհում:



ԲԱՆՈՒՈՐԻ ԵՐԳԸ

Կտրուենք այս հին աշխարհից,
 Թոթափենք նրա փողին մեր ոտից.
 Մեզ թշնամի են կուռքերը ոսկի,
 Եւ ատելի է անունը բռնութեան:

Ել, բարձրացիր բանւոր ժողովուրդ,
 Թշնամու դէմ եղբայր սովատանջ.
 Հնչիր կոչը վրէժառու,
 Յառաջ և այլն...

Դէպ շարքերը խեղճ եղբայրների,
 Քաղցած մարդկութեան կերթանք այցի.
 Կանիծենք միատեղ չարագործին,
 Դէպի մարտ կրսլանանք միասին:

Ել, բարձրացիր և այլն:

Հարուստների անկուշտ ոհմակ
 Կողոպտում են քո դառն աշխատանք:

Քրտինք թափիր՝ նրանք վայելէն,
 Նոյն իսկ կտոր հացից գրկեն:

Ել, բարձրացիր և այլն:

Մեռիր սովից—ինչ հոգ նրանց,
 Մեռիր սովից—նրանք խրախճանան.
 Ամօթ, պատիւ իսպառ մոռացած,—
 Տգրուկի պէս կարօտ քո արեան:

Ել, բարձրացիր և այլն:

Ընդդէմ թշնամի հարուստներին,
 Ընդդէմ բոլոր չարագործներին,
 Ջարդել, կոտորել ոճրագուծներին,
 Ծագէ նոր կեանք աննման:

Ել, բարձրացիր և այլն:

Թիկունքդ լայն, թևերդ ուժգին,
 Կուրծքդ պինդ պողպատէ.
 Սիրել գիտես, կուռել չըգիտես
 Դուն անզգայ երիտասարդ:

Քոյրդ տանում են քրդերը,
 Եղբօրդ արիւնն են ծըծում,
 Դուն անտարբեր սառն արիւնով
 Հանգստութիւն ես փնտրում:

Ամօթ քեզի, հազար ամօթ,
 Որ զէնք չունիս քո ձեռքին,
 Քո եղբօրը կուռի դաշտում՝
 Թշնամին է տապալում:

Ձեռքդ տուր, երգուենք այստեղ,
 Թողնենք փառքը աշխարհի,

Գնանք կռուենք առիւծաբար
Ի սէր ճնշուած հայ ազգի:

ԹՈՂ ԵՐԳԷ ԲԼԲՈՒԼ...

Թո՛ղ երգէ բլբուլ Մշու դաշտերում,
Թո՛ղ վարդեր բացուեն Սասնոյ լեռներում,
Թո՛ղ մեր թշնամիք սարսեն, սարսափեն—
Գազան թուրքերը ճաքեն, տրաքուեն:
Մշու դաշտերը ծաղկունքով բացուած,
Հայու սերունդը կը պահէ Աստուած,
Ինչքան որ կուգեն թշնամիք թող գան.
Սասնոյ լեռներէն ինչ պիտ ստանան:
Ինչո՛ւ չը ծաղկէ ծաղիկն անխնայ,
Այդ թշնամուցը ո՞վ կը վախենայ,
Թող հայ աղջիկը երգէ վառվռուն.
Սուր զէնքը ձեռքին ջարդէ թշնամուն:

ԹՈՒՄԱՆԵԱՆՅԻՆ

Ղարսից դուրս եկան, Թաղբուր ժողովուեցան,
Նոյն գիւղի մէջը կարգով շարուեցան,
Գիշերուայ ժամի զանգերը զողանջեցին,
Քաջերը սուրբ հաղորդութիւն ստացան:

Քաջ Թումանը խնդրեց թշնամեաց—
Զլսեցին հերոսին, զոհուեցան միասին:

Քաջերը կանգնեցին սուրբ սեղանի առաջ,
Երգուեցին միասին սուրբ դրօշը բռնած,
Քաջ խմբապետ Թումանը առաջն էր կանգնած,
Զայն տուեց, եղբայրը, գնանք դէպ առաջ:

Քաջ Թումանը և այլն:

Շտապով գիշերը գիւղից դուրս եկան,
Արշալոյսը բացուեց Բուրիկ աղբիւր հասան.
Անպիտան թշնամիները շուտով տեսան
Երկու կողմից օգնութեան հասան:

Քաջ Թումանը և այլն:

Ղալա-Բողազից անշուշտ նկատեցին
Թշնամիքը քաջերին պաշարեցին,
Օգնող չեղաւ անօգնական մնացին,
Յոյսները կտրեցին ու այնպէս զոհուեցին:

Քաջ Թումանը և այլն:

Քաջ որսորդ Գևորգը չկտրեց յոյսը,
Սուրբ դրօշակը պարզեց տասնապետ Պետրոսը.
Գնդակով թաղում էին թշնամեաց յոյսը,
Անվեհեր կուռում էր քաջ Քեօսայ հերոսը:

Քաջ Թումանը և այլն:

Ծերունի քահանան բռնել է խաչը,
Թումանից խնդրեց այսպէս Գուրգէն քաջը—
Կրակ բանանք դէպի թշնամու շարքը
Զի կարելի, ասաց խորամիտ քաջը:

Քաջ Թումանը և այլն:

Թումանեանցը մտածում էր մեր վիճակը,
Ասաց մի բանաք սոխի վրայ կրակ—
Սոսկալի կըլինի Կովկասի վիճակ
Թող մեր եղբայրներ քնեն մեր վիճակ:

Քաջ Թումանը և այլն:

* *

(Գամառ-Ջաթիլա)

Թէ իմ ալևոր հերքս սենային,
Ոյժս ինձ յետ գար, կտրիչ դառնայի,
Նժոյգ ձի նստած, բեխըս ոլորած,
Ձեռքս թուր առած, ես դաշտ կ'երթայի:

Ես դաշտ կերթայի,—դաշտ Աւարայրի,
Ողողած, ցողած հայոց արիւնով,
Ազգ իմ սիրական, դու ազգ թորգոմեան,
Քո կորցրած թագը, քեզ յետ կուտայի:

Կասէի հայոց օրիորդներին,
«Ծախեցէք հագի ձեր թանգ շորերը,
Թողէք պաճուճանք, զարդ մարգարիտներ—
Ժանգոտած ու գուլ են մեր թրերը»:

Տուէք բէհեգեայ, մեզ ձեր շապիկը,
Որ մենք փաթաթենք մեր մարմնու վերքը,
Վիրակապ հիւսէք դուք ձեր մագերից.
Սյապէս յայտնեցէք դուք մեզ ձեր սէրը:

Թէ ես լինէի հարուստ մեծատուն,
Սընդուկներս լի ոսկով, արծաթով,
Շատերու նման ես չէի լինի
Երբէք՝ ազգասէր ունայն խօսքերով:


Թէ ես լինէի փողի չըկարօտ,
Կառնէի առատ գնդակ և վառօղ,
Արձակ, հաժարձակ կերթայի հանդէպ—
Հայաստեաց ազգին՝ անթիւ զօրքերով:

Թէ ես լինէի մի երկրի իշխան,
Կուտայի զօրքիս սաստիկ հրաման,
Շուտաքայլ երթալ դէպի հայաստան,
Խղճու հայ ազգին լինլ օգնակին:

Եւրոպ, Ասիա արեան գետերը—
Կը վազեցնէի հեղեղի նման.
Մինչև որ թագ, գահ ու ազատ կրօն
Ինձնից չըստանար թշուառ Հայաստան:

Բայց... եթէ մի օր, մի ժամ, միրոպէ
Աստուած լինէի մեր հողագնդին,
Ինչ սուր սլաքներ պիտի շաղ տայի
Մեր արիւնարբու թըշնամեաց գնդին:

Նենգ... թուրք մոլի, պարսիկ ոխերիմ,
Դարևոր սոսիս դու յոյն կրօնամոլ,
Քիտցիր, որ իմ սուր՝ երկսայրի սրից
Անպաւ չէր մընայ ոչ մի ձեր որդին:



Ա Ն Դ Ր Ա Ն Ի Կ Ի Ն

Իբրև արծիւ ուռառնում ես լեռ ու ժայռ,
Թնդացնում ես երկինք, գետինք տենչավառ,
Քաջ անունդ պիտի յիշուի դարէ դար,—
Հսկայ լեռներ քեզ ապաստան Անդրանիկ:

Քիւրդ ու տաճիկ երբ լսեն քո անունը,—
Օձերի պէս պիտի սողան իրանց բունը.
Երակներից ազնիւ քաջի արիւնը
Ձը ցամաքի մինչ յաւիտեան Մարտանիկ:

Հայոց կուսանք դափնեայ պսակ թող հիւսեն,
Քնքոյճ ձեռամբ քո ճակատը պսակեն,
Գոհարներով անվախ կուրծքդ զարգարեն.
Կեցցէ յաւէտ դու անսասան Անդրանիկ:

Հայաստանի սոխակները քեզ համար,
Թող դայլայլեն գիշեր-ցերեկ անդադար.

Անյաղթ մնաս դու քաջ կուռի սիրահար,
Հայրենիքի տէր ու պաշտպան Անդրանիկ:



ԻՆՁ ՄԻ ԽՆԴԻԻ...

Ինձ մի խնդրի, ես չեմ երգի
Իմ տխրութիւնն ահագին,
Աղեկաւոր նորա ձայնից
Կը խորտակուի քո հոգին:

Ո՛չ, քեզ համար այդպիսի երգ
Երգելու չեմ ես երբէք:

Ես երգեցի սարի վերայ,
Ուր չորացան խոտ ու վարդ,
Անապատ է այնտեղ հիմա,
Սե, ամայի անապատ:

Հառաչանքից այրուած սրտում
Էլ ծաղիկ չի դալարւում:

Բոյր ու գեփիւռ ես կուզէի,
Եւ արշալոյս ոսկեվառ,
Որ մի պայծառ երգ հիւսէի
Ու երգէի քեզ համար:

Բայց իմ սիրտը բռնած են դեռ
Հուր, հառաչանք, սե գիշեր:

ԻՆՁ ԱՆԵՆՔ...

(Գամառ-Քաթիպա)

«Ի՞նչ անենք»... Ամօթ այսպէս ասողին,
Ամօթ, բիւր ամօթ, յուսատուողին,
Մահ, մահ, հազար մահ հէգ վհատողին—
Եղբայրք, ալ չասենք—«հայեր, ի՞նչ անենք»:

Ասէք, ի՞նչ կանէ ջուրը ընկածը,
Ասէք, ի՞նչ կանէ սոված, քաղցածը,
Ասէք, ի՞նչ կանէ գերի ընկածը...
Եղբայրք, ալ չասենք—«հայեր ի՞նչ անենք»:

Ջրամոյսը ճըգնին, քանի ոյժ ունին—
Քաղցածը մաշէ շէմքը դրկիցին,
Փախչել կը հնարի կաշկանդուած գերին...
Եղբայրք, ալ չասենք—«հայեր, ի՞նչ անենք»:

Հարուստ, հէ՛ր ոսկիդ սընդուկ դըրել ես,
Կտրի՛չ, ռո օրուայ ոյժըդ պահել ես,
Առ ի՞նչ, ազգասէր, ազգըդ սիրել ես...
Եղբայրք, ալ չասենք—հայեր ի՞նչ անենք»:

Հարուստ, դիմացդ է ազնիւ ասպարէզ,
Հայրենիք լաւ է, քան թէ ոսկու դեզ,
Թէ մեռնես—ոսկին հե՛տդ կը տանես...
Եղբայրք, ալ չասենք—«հայեր ի՞նչ անենք»:

Եւ ի՛նչ, ալ կանցնի քանի մի տարի
Այդ թշնգ վարդը խտակ կը թառամի,
Չի թառամի միայն յիշատակ բարի...
Եղբայրք, ալ չասենք—«հայեր, ի՞նչ անենք»:

Թէ ուզէ հայը, նա շատ բան կանէ.
Եղբայրք, ալ չասենք—«հայեր, ի՞նչ անենք»:

Հայը կըստիպէ վեհ պատրիարքին—
Յորդորակ սփռել ամբողջ հայ ազգին,
Թոթովել, զարթեցնել մեր թմրած հոգին...
Եղբայրք, ալ չասենք «հայեր, ի՞նչ անենք»:



Իմ կեանքիս մէջ չեմ մոռանայ բնաւին
Ո՛չ իմ վարդը, ո՛չ իմ սէրը, ո՛չ լուսին,

Քեզ, ով լուսին...

Դէմքդ պայծառ, սիրտդ ուրախ, կաթոգին,
Նազես, ճեմես, փայլ գգուանք տաս աստղերին—

Այդ աստղերին:

Բայց ինձ երբէք չես հարցներ, չես փնտռեր...
Գնա լուսին, հոգ չէ, գնա մի լսիր.

Ո՛հ, մի լսիր...

Կըգա մի օր դատի կելնենք միասին
Դու կամաչես, դու կը զղձաս ցաւագին.

Ո՛հ, ցաւագին...

Լուսնեակ, խնդրեմ չցաւես դու ինձանից,
Վերաւոր եմ, դաբման կուգեմ քեզանից.

Ո՛հ, քեզանից...

Ոչ որ չունեմ, ինձ զթացող, ինձ օգնող,
Ցաւերս շատ, վէրքերիս չկայ դեղ դնող...

Ո՛հ, դեղ դնող:

Առ դու լուսին, առ իմ աչաց արտասուէնքը
Որ ծովացաւ քան զՈվկեան մեծ ծովը.

Ո՛հ, մեծ ծովը...

ՎԱՐԴԱՆԻ ՄԱՆԸ

(Գամառ-Զատիկա)

Լուսն: Ամպերը եկան ծածկեցին
Երկինք. ու լուսին աչերս խլեցին.
Մնացի մենակ, հոգիս վրդոված,
Ձեռներս ծոցիս, զլուխս քարշ արած:
Եւ այնուհետեւ ամեն իրիկուն
Մնում եմ լուսնի խաղաղ ծագելուն,
Նսրա տխրամած դէմքը նայելիս՝
Յիշում եմ թշուառ վիճակը ազգիս:
Ա՛խ, ցոլա, փայլէ, տխրագէմ լուսին,
Գուցէ քու փայլից փայլ տաս և հային.
Պատմէ շատերին Վարդանի մահը,
Կամ ինչպէս կորաւ հայ ազգի գահը.
Կամ ինչ վեհ սիրով սիրում էր Վարդան—
Մայրենի հողը աշխարհ Հայաստան:



Խ Ա Ն Ի Ե Ր Գ Ը

Լուսին չըկար, մութ գիշեր էր,
Մի խումբ կերթար արագ-արագ,
Տեսան, որ քաջ խանի խումբն էր—
Զինուած էին բոլոր նրանք:

Հրացանները ուսերին,
Դրօշակը պարզել էին.
Գնում էին տաճկաց սահման,
Ազատութիւն երգում էին:

Կեանքերը ազգին նուիրած,
Կտրիչ խանը առաջն ընկած.

Գնում էին ուրախ ուրախ, զուարթ,
Թուշում էին ինչպէս կրակ:

Մութ անտառից անցնում էին,
Ամեն մէկը առիւծ էին:
Նժոյգ ձիանները նստած—
Մերկ սուրերը քաշել էին:

Երբ քաջ խանր Բասէն ելաւ.
Թնդանօթներ արձակեցին.
Հայ քաջերի մօտիներէց
Գնդակները գոռ-գոռացին:

Ջերմ-եռանդով կռուում էին,
Սրտերումը կար շատ պահանջ.
Փախչում էին տաճկաց զօրքեր.
Չէին կարող կանգնել առաջ:

Վէցցէ խանր իւր խմբովը,
Սարսափ թողեց Բասենումը.
Երեք զօր ու զիշեր կըռուեց,
Աչքերիցը կըտրեց քունը:

Հայաստանի հողի վրայ
Թափեց քաջը իւր արիւնը.
Հայեր, յիշենք, չըմոռանանք
Կտրիչ խանի քաջ անունը:



* *

Խնուսից եկած հայ զինուորները քաջ,
Արեան դաշտից եկած և պարտաճանաչ.
Հին-հին վրէժ առնելն էր նրանց պահանջ,
Քաջի պէս վազեցին թշնամու առաջ:

Մօտ թուով տասնուչորս և իրանք անվախ,
Ղեկավար Տիգրան քաջ գործում էր անկախ.
Անվախ Մուշեղ, Հայրօն, Շապուհ և Մէլիք,
Համազասպ, Մարտիրոս կանգնած էին դիրք:

Վրաստանի շքեղ Թիֆլիս քաղաքը—
Չեր ճանաչում կանխաւ իրա որդոցը,
Երբ որ նրանք Մոզնու թաղում կանգնեցան,
Այն ժամանակ հայերը ուրախացան:

Թաթոս ընտրեց արդէն Մօսօ և Մխիկ,
Անուանուեցան նրանք խբեր թուրքիկ.
Խարփուխ թաղի դիրքերումը միշտ անքուն,
Ջարդեցին, այրեցին անգութ մօլլի տուն:

Թէպէտ քաջ Մուշեղին նրանք զոհ տուին,
Գազան թշնամեացը շուտով յաղթեցին.
Կըլինի ազատութեան գրաւական—
Պատիւ բերին նրանք հայ Դաշնակցութեան:



* *

Խաղաղ դաշտի որդիք, լեռները ելնենք,
Արօր, գութան մոռնանք, հրացան առնենք,
Խեղդուած մեր բողոք յայտնենք զէնքերով,
Եւ մեր արդար դատը վարենք արիւնով:

Մեր կեանք, մեր մահ թող լինի ազատ,
Ճընշուած հայի որդիքն հարազատ:

Քան թէ ամեն վայրկեան կենդանի մեռնել,
Ազատութիւն վճուել ու հանգիստ մեռնել.
Հինգ դարերով ճընշուած, ստրուկ հայ ազգը,
Այսպէս պէտք է լուծել եղբայր վրէժը:

Մեր կեանք և այլն:

Ստրկութեան շղթան պարզ շառաչում է,
Ազատութեան ճընշուած ձայնն հառաչում է.
Ազատ լեռներ թող լինին մեր ապաստան,
Եւ ընդարձակ հողեր՝ հայոց գերեզման:

Մեր կեանք և այլն:

Յառաջ դիմենք, զարնենք համիլիային,
Շրջենք, հայ դիւցազունք, հասնենք պալատին.
Իմաց տանք Սուլթանին, — անգութ բռնաւոր,
Ծագէ հայ հերոսաց համար պայծառ օր:

Մեր կեանք և այլն:



Ծ Ի Ծ Ե Ռ Ն Ա Կ

Ծիծեռնակ, ծիծեռնակ, դու գարնան սիրուն թռչնակ.
Դէպի ուր, ինձ ասա, թռչում ես այդպէս արագ:

Ա՛խ թոխր, ծիծեռնակ, ծնած տեղդ Աշտարակ,
Անդ շինիր քո բունը — հայրենի կտուրի տակ:

Անդ հեռու ալեոր հայր ունիմ սրգաւոր,
Որ միակ իւր որդուն սպասում է օրէցօր:

Երբ տեսնիս դու նորան, ինձնից շատ բարե արա,
Ասա, թող նստի ու լայ իւր անբաղդ որդու վրայ:

Դու պատմէ, թէ ինչպէս, աստ անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով, ողբալով կեանքս մաշուել, եղել է կէս:

Ինձ համար ցերեկը մութ է շրջում արեգը,
Դիշերը թաց աչքիս՝ բնաւ քուն մօտ չի գալիս:

Ասիւր, որ չը բացուած թառամեցայ միացած,
Ես ծաղիկ գեղեցիկ հայրենի հողից զրկուած:

Դե՛հ սիրուն ծիծեռնակ, հեռացիր, թոխր արագ.
Դէպի հայոց երկիրը, ծընած տեղդ Աշտարակ:

*
*
*

Ծուխը ամպի պէս կելլէր դէպի վեր,
Տնդդի նման բոցը կը քայլէր,
Տուն, եկեղեցի, պարտէզ ու այգի,
Անսիրտ, անհոգի մատնուած են կրակի:

Հայերն հոտի պէս սարսած կը վազեն,
Անցնող դարձողէն օգնութիւն կուգեն.
Օգնութիւն, խեղճեր: Կատղած օսմանլին,
Չար մահը կը սպառնայ զարհուրած հային:

Մայրը կականով կը փնտրէ աղջիկ,
Աղջկան գերի առաւ չար տաճիկ.
Իր որդուն կուգէ հայրը շուարած,
Որդուն կը տեսնէ զազուխի ծերին:

Հայի հաւաքած մալը աղբատին,
Հալալ փայ եղաւ անկըշտում քիւրդին.
Խեղճը յուսահատ կաշէ երկնքին,
Կըստասէ նպաստ հրեշտակաց զօրքին:

Խաբուսիկ յոյսեր... դեռ շատ ու շատ դար
Պիտի խաբուիս, հայ, ինչպէս խաբուեցար.
Թէ ինքդ չանես քո գլխիս ճարը —
Ե՛րբ պիտի օգնէ քեզ օտարը:

Խեղճ մարյ, մի անգամ մեռնելէն վախեցար,
Մինչ մահուան օրըդ հազար մահ տեսար.
Հազար մեռնելդ հազար ցաւերով,
Չաւակիրդ փոսը ձեռքովդ փորելով:

Դու միշտ եղբօրդ անտերունջ թողիր,
Մատիդ ծայրովը նրան չօգնեցիր.
Գլուխն առաւ խեղճը, գնաց հեռացաւ...
Հայաստան ձեռքէդ ամայի դարձաւ:

Դուն կարծեցիր թէ, ոսկին մեծ բան է,
Ամեն մի ցաւի, դարդի դարման է.
Ապա հէր «ոսկիդ քեզի չը օգնեց,
Կընկադ, գաւակիդ մահէն չը փրկեց:

Ա՛խ, հայեր-հայեր, թէ որ ձեր ոսկին
Կիսով չափ զոհուէր օգուտ հայ ազգին.
Առ միշտ կը դադարէր ձեր լացն ու կական—
Որ դրախտ երկնաւոր կըլլար Հայաստան:



* *

Ծագեց արեւ ազատութեան,
Փախէք ամպեր երկնքից.
Համագասպը իւր խմբովը
Կուգայ թաչէն գաւառից:

Դալիս են բազմաթիւ զօրքով
Ագիգեօգալ-Ռէզովը.
Յանկարծ ընկաւ Ասկեարանը
Հերոսների ուռկանը:

Թուրք խուժանը սարսափահար
Փախչում էին գլխակոր,
Թողնելով իրանց յետևից
Դիակներ հարիւրաւոր:

Թաչէն գաւառը սրբեցիր
Թարաքեամայ թուրք ցեղից.
Ժողովրդին հանգիստ տուիր՝
Թուրք չի անցնում այնտեղից:

Դաշնակցութիւն—պարծանք քեզի,
Քաջեր ունիս սրտալի.
Ամբողջ աշխարհ հռչակուեցաւ
Համագասպը պանծալի:

Կ Ռ Ո Ի Ն Կ

Կուռնկ, ռուսի կուգաս, ծառայ եմ ձայնիդ,
Կուռնկ, մեր աշխարհէն խաբրիկ մի չունէս:
Մի վազիր երամիտ, շուտով կը հասնես,
Կուռնկ, մեր աշխարհէն խաբրիկ մի չունէս:

Թողել եմ եկել մուրքերս ու այգիս,
Քանի որ «ա՛խ» կանեմ կը քաղուի հոգիս:
Կուռնկ, պահ մի կացիր, ձայնիկդ ի հոգիս,
Կուռնկ, մեր աշխարհէն խաբրիկ մի չունէս:

Քեզ խաբար հարցնողին չես աւանիր տալապ,
Ձայնիկդ անուշ կուքայ, քան զղջրի տօլապ,
Կուռնկ, Պաղտատ իջնուս կամ թէ հալաբ.
Կուռնկ, մեր աշխարհէն խաբրիկ մի չունէս:

Սրտներս կամեցաւ, ելանք գնացինք,
Այս սուտ աստըւորիս դարդերն իմացանք,
Աղուհացիկեր մարդկանց կարօտ մնացինք.
Կուռնկ, մեր աշխարհէն խաբրիկ մի չունէս:

Ոչ ըզլի օրը գիտեմ, ոչ էլ կիւրակին,
Ջարկած է զիս շամփուրը, բռնած կրակին.
Այրուելս չեմ հոգար, ձեզնէ կարօտ եմ.
Կուռնկ, մեր աշխարհէն խաբրիկ մի չունէս:

Պաղդատու կուգաս՝ կերթաս ի Սէհրաթ,
Թըղթիկ մի զրել եմ, տամ քեզ ամանաթ.
Աստուած թող վկայ լինի քո վրադ.
Տար, հասցրու սա իմ սիրելուն:

Դրել եմ մէջը թղթիս, թէ այստեղ մնացի,
Շաբաթ ու օրեր աչքս չը բացի.
Միրելիք, ձեզնեն կարօտ մնացի.—
Կուռնկ, մեր աշխարհէն խաբրիկ մի չունէս:

Աշունն է մօտեցել գնալու ես թէտ-պիր,
 Երամ ես ժողովել, հաղարներ ու բիւր.
 Ինձ պատասխան չը տուիր, ելար գնացիր.—
 Կռունկ, մեր աշխարհէն գնա, հեռացիր:

**

Կենաց փշոտ առաքելքը,
 Աւաղ-աւաղ ինձ դիպաւ,
 Զուրս լեղի, կերած հացս,
 Ո՛հ, կերած հացս թոյն դարձաւ:
 Հեռու երկիրնք, արև լուսին,
 Աւաղ-աւաղ տխրամած.
 Ես կը մտնեմ բանդիս խորը,
 Ո՛հ, բանդիս խորը շղթայած:

Զկայ հայր իմ, չկայ մայր իմ,
 Աւաղ-աւաղ քոյր, եղբայր,
 Եւ ոչ մի այլ մխիթարիչ,
 Ո՛հ, մխիթարիչ բարեկամ:

Անմեղական պատիժ կրելով
 Աւաղ-աւաղ սուլթանից:
 Մօլեկրօն ու վայրենի,
 Ո՛հ, վայրենի իսլամից:

Վերաքննեց, չար նկատեց,
 Աւաղ-աւաղ իմ մասին,
 Վնասակար զիս նկատեց,
 Ո՛հ, զիս նկատեց իւր ազգին:

Ահա կիջնեմ սև գերեզման,
 Աւաղ-աւաղ զրկեմ հող,
 Իմ անունս, յիշատակս,
 Ո՛հ, յիշատակս թող մնայ:

ՀԻՐԻՔ Է, ՄԱՅՐԻԿ...

Հէրիք է, մայրիկ, դու ինձ փայփայես,
 Հէրիք է, քոյրիկ, ինձ կըծբիդ սեղմես.
 Ես կուզեմ խմել ջրի տեղ արիւն,
 Ես կուզեմ կռուել, ես կուզեմ մեռնել:

Հասակս քսան տարուց անցկացաւ,
 Սիրտս վրէժով լիքը լրցուեցաւ.
 Ձեմ ուզում տեսնել եղբայրիս թշուառ,—
 Ես կուզեմ կռուել, ես կուզեմ մեռնել:

Լացով չենք կարող փրկել հայրենիք,
 Մայրիկ, ինձ պէտք է քաջութիւն և զէնք,
 Զեռքերս ծալած չեմ կարող նստել,—
 Ես կուզեմ կռուել, ես կուզեմ մեռնել:

Համիդիան ունի գործեր մեզի հետ,
 Մեզ կոտորում են, մեզ թալանում են,
 Դէհ, հէրիք է, մայրիկ, այժմ լսիր,—
 Ես կուզեմ կռուել, ես կուզեմ մեռնել:

ՀԱՅ ԵՐԻՏԱՍՍԱՐԴՆԵՐ...

Հայ երիտասարդներ, շուտ շտապեցէք,
 Բռպէն շատ թանգ է, առաջ քայլեցէք.
 Օտարը հայերին կասէ—վախկոտ են,
 Քաջութեան դրօշակ պարզեցէք:

Միթէ մենք Վարդանի ցեղիցը չենք,
 Մէկս հազարի դէմ կը կռուենք.
 Մի ժամանակ մենք շղթայուած էինք,
 Այժմ ազատ ենք և ունինք շատ զէնք:

Քաջ թումանեանցը և որսորդ Գէորգ
 Վազմ պատրաստեցին իրանց խումբը:

Դաշնակցութեան դրօշակի ահից—


Սարսափահար փախչում է վատ թուրքը:

Օգնութեան հասան քաջ խան ու Մուրադ,

Ճիշտ հայու զաւակ, ծնունդ հարազատ.

Մոգացի Գրիգոր և երկու Սըշակ—

Գնդակ էին թափում կարկուտից արագ:



*
* *

Հեռաւոր երկիր, նստած դու նժդէն,
Հայրենեաց բաղդին մօտուց ես տեղեակ.
Քարոզ քաջարի նոր սկզբնաց վէն,
Յեղափոխութեան ձայնատու Հնչակ:

Նոր գաղափարի բոց ցանած սերման,
Ազնիւ պտուղներ հասուն են արագ.
Կարին և Պօլիս որոտման նման,
Անպրանիկ շարժումք ծնաւ քեւ Հնչակ:

Չար բռնակալը հայոց կեղեքիչ՝
Վախէն պահուեցաւ ոսկէ գահի տակ.
Խուլ եւրոպայի թնդաց մէջ դահլիճ,
Հայը ցնցուեցաւ, կարմրեցաւ Հնչակ:

Այսօր քո սերմանց նոր պտուղք ահա
Հասան, կարմրին արեան նմանակ.
Կենաց և մահու սուրբ ժամ մերձենայ,
Կարմիր հրաւերիդ ակն ունինք Հնչակ:

Կոչնակդ հնչեցուր, հնչեցուր արագ,
Թող հայք ոտք իննեն—ծագէ մինչև ծագ.
Փշրէ ժանդ շղթան, ծագէ նոր արև,
Ազատ ենք, հնչէ, ոսկէգօծ Հնչակ:

Դ Ժ Բ Ա Ղ Դ

(Ա. Նեզրէ)

Ողբում է ծովը... և իր վշտալի կրծքին երերուն
Միմեանց ճնշելով ժայռոտ ափերին տնքում են, հեռւմ,
Եւ կամարը խիստ, յոնքերը կիսած, համակուած վշտով,
Կապարեայ ամպերն իրար խառնելով լուռ ու անտարբեր,
Մույլ բարձրունքից շեշտում է դէպ ցած հրեղէն շանթեր:

Ողբում է ծովը... և արցունքներն ալիքով եռուն,
Մի ջահիլ, սիրուն դիակ էր տանում—ասես օրօրում...
Դիակն էր տանում այն դժբախտ չքնախ ջրայեղ կոյսի,
Որը հայցելով անողոք բաղդից կեանքի փրկութիւն,
Գտել էր նրան մութ, կորստաբեր ծովի անդունդում...

Ողբում է ծովը... և նրա անգուսպ հեկեկանքներում
Հսւում է հառաչ, արցունք բռնութեան կրած վշտերու.
Հսւում է կեանքի սիրոյ ցնորում—ջերմ համբոյրներ...
Եւ թւում է, թէ ժայթքում է բողոք կոյսի ջերմ կրծքից,
Եւ անէծք նրան, որ անարգեց իր սէրն անբիծ:

ԽԱՆԱՍՈՐԻ ՄԱՐՏԸ

Կարկուտ տեղաց խանասորի դաշտումը,
Ֆիդային էր—գաշնակցական վրէժ լուծում հովտումը,

Սոսկաց բիւրդը, քնաթաթախ մարդեցին,

Չէր երազում ջնջուել իսպառ ֆիդայից—լուսաբացին:

Եաման Աստուած, ֆիդան եկաւ, ուր փախչենք,—

Ասաց՝ որդուն կրծքին սեղմեց լեղապատառ քրդունին:

Մի վախենար, հանգիստ եղիր, բաջի ջան,

Կանանց երբեք ձեռք տալու չէ վրէժխնդիր քաջ ֆիդան:

Մի ժամուայ մէջ Մազրիկ ցեղը ջնջուեցաւ,

Խանասորի կանաչ դաշտը կարմիր գոյնով ներկուեցաւ:

Փշիր զեփիւռ զէպ Յառաւուր մենք թռչենք,
Դիրքեր բռնենք, թաղա հալուած ձիւնի ջրով ճաշակւենք:

Մերթ կուում է, մերթ բարձրանում քաջ Փիղան,
Եզակի է պատմութեան մէջ արշաւանքի տեսարան:

Չկար տեսնող, տխուր պատեց ամենքին,
Երանի է նրա հոգուն, ով զոհ գնաց այդ կուին:

Քեզ ենք յանձնում, ով պաշտելի Յառաւուր,
Պրծքիդ մէջը ամուր պահես անմահ զոհերն հայերու:

Հայեր, յիշէք նուիրական այն օրը,
Յուլիս ամսի քսանութինդին կատարեցէք մեծ տօնը:

ԿՈՎՃԱՍԻ ՔԱՋԵՐ...

Կովկասի քաջեր, խմբեր կազմեցէք,
Քաջ Անդրանիկին օգնութեան հասէք,
Առած իւր շուրջը զինուոր ութնասուն,
Մաքրում է ճանապարհ զէպի Սասուն,

Սուլթան սարսափած, ճարը կըտրուած,
Հազար ոսկի է գլխին խոստացած:

Հայ պատանիներ, շուտով վարժուեցէք,
Երբեք մի վախենաք, սուրբ շարժեցէք,
Հասել է ժամը սուրբ ազատութան,
Լռելու ժամ չէ, շուտով քայլեցէք:

Սիրենք միութիւն ատենք վատութիւն,
Ունենանք հայեր միշտ ազատութիւն:

Օտար հողի մէջ չը մնանք, հայերս,
Հերիք է հային այս պանդխտութիւն,
Թող չը ծաղրէ մեզ անգութ թշնամին—
Մինչև մենք հասնինք մեր նպատակին:

Սիրենք միութիւն, ատենք վատութիւն,
Ունենանք հայեր, միշտ ազատութիւն:

Քաջ Անդրանիկը անվախ սուրն առած,
Հայաստան գնալ վաղուց էր ուխտած,
Այլ ու ձախ ջարդել տաճկայ զօրքերին,
Քիւրդերից մատաղ բերել վանքերին:

Դէհ, Շէրիֆ փաշայ, մտածիր հնար,
Հազար ոսկիով անես զլխիդ ճար:

Կովկասի քաջեր, առիւծի ճուտեր,
Վերցրէք ձեր սուրեր, առէք նիզակներ,
Հայ օրիորդներ, պճնեալ տիկիներ,
Ծախէք ձեր զարթեր, առէք մեզ զէնքեր:

Հարուստ, ձեր ոսկին տուէք ազգութեան,
Ձեր անգին անուն յիշուի յաւիտեան:

Դէհ հայ ընկերներ, հեծէք ձեր ձիեր,
Բաց թողէք սանձեր, անցէք սար ու ձոր,
Ահա կուրի դաշտ, թշնամին անհաշտ,
Մեր սուր թուրն ուտէ Օսմանեան վաշտ:

Սաւա քաջ մուրադ «առած եմ խրատ»,
Կամ կուրել ազատ, կամ մահ անարատ:

ԿՈՌԻՆՏԻՔ ՏՂԵՐԲ...

Կուրեցէք, տղերք, կուրեցէք քաջ-քաջ,
Անվահներ կանգնած թշնամու առաջ,
Յանկալի է մեզ միշտ ազնիւ մահը,
Հեռու մեզանից ոսոխի ահը:

Այս անգամին էլ ցոյց տանք թշնամուն,
Թէ ինչէ հայի ոյժն ու քաջութիւն:



Ահա քիւրդերը փախչեն սարսափած,
 Ահա դիւաններ արեամբ շաղախուած,
 Կրակ տեղացէք, անդադար կրակ,
 Փառք մեր գէնքերին, առատ է զնդակ:

Այս անգամին էլ ցոյց տանք թշնամուն,
 Թէ ինչ է հայի ոյժն ու քաջութիւն:

Մեր զօրախմբեր, մեր նախնի քաջեր—
 Մեզի կըսպասեն՝ մեր սէգ եղբայրներ,
 Ազատ չենք ծնուած գէթ մեռնենք ազատ,
 Եւ մեր սուրբ հոգին պահենք անարատ:

Դէհ կռուէք, տղերք, մինչև շունչ վերջին,
 Արժանի լինիք փառաց պսակին:

Մեռնենք յուսալով մերն է ապագան,
 Մեռնենք, բայց կեցցէ—կեցցէ Հայաստան,—
 Այսպէս յորդորեց և ընկաւ արին,
 Թողնելով մեզնում յիշատակ բարին:

Ահեղ կռուի մէջ աննման հերոս—
 Անմոռանալի կտրիչ Մարտիրոս:

Գ Ա Ր Ե Գ Ի Ն Ի Ն

Հայաստանի փառք ու պարծանք Գարեգինը կարնեցի,
 Թիկունքը լայն, թևերը հաստ, ինքը կորիւն առիւծի:
 Հայաստանի վերքին հմուտ, վերաբոյժ էր խելացի,
 Եղբայր, լացէք ու ողբացէք այն քաջ հերոսի անձին:
 Խմբով ելան Ղալա-Ռողազ՝ թշնամու դէմ կռուեցին.
 Մի քաջ հերոս վիրաւորուաւ Գարեգինին յանձնեցին:
 Նա ուզում էր վիրաւորին հեռացնել արեան դաշտից.
 Զորս կողմիցը յարձակուեցին և քաջին պաշարեցին:

Անիրաւ, վատ թշնամի դու, քաջ Փիղային լաւ ճանչէ,
 Ուրիշից օգնութիւն խնդրող, Եւրոպայից ածաչէ:

Ո՛րքան կռուես մեզ հետ կռուէ քո այդ ամբողջ զօրքերով—
 Վստահ եղիր, որ քեզ յաղթող պիտի լինի Դաշնակը:

Նա ուխել էր՝ պէտք է զոհէր իրա կեանքը դրօշակին.
 Եւ ճշտապէս նա նուիրեց իրա կեանքը թանկագին:

Կրծքին չորս զնդակ ստացաւ, վէրք ունեցաւ հնազին.
 Կրկին հրացան էր պարպում, այն քաջ հերոս Գարեգին:

Ամբողջ հայութիւնը կանգնած ձեր վրէժը առնելու,
 Քնէք Հայաստանի քաջեր, հանգիստ ձեր ոսկորներուն:

Միջազն եմ, պէտք է յիշեմ միշտ ձեզ նման քաջերին,
 Որ թափեցիք ձեր արիւնը Հայաստանի հողերում:

Հ Ի Մ Ի Է՞ Լ Լ Ռ Ե Ն Ք:

(Գամառ-Քաթիպա)

Հիմի էլ լռենք, եղբայրք, հիմի էլ,
 Երբ մեր թշնամին իր սուրն է դրել,
 Իր օրհասական սուրը մեր կրծքին,
 Ականջ չի դնում մեր լաց ու կոծին.
 Ասացէք, եղբայրք հայեր, ի՞նչ անենք,
 Հիմի էլ լռենք:

Հիմի էլ լռենք, երբ մեր թշնամին
 Դաւով, հրապուրքով տիրեց մեր երկրին,
 Զնջեց աշխարհաից Հայկայ անունը,
 Հիմքից կործանեց թորգոմայ տունը,
 Խլեց մեզանից թագ, և խօսք, և գէնք:
 Հիմի էլ լռենք:

Հիմի էլ լռենք, երբ մեր թշնամին
 Խլեց մեր սուրը—պաշտպան մեր անձին:

Մշակի ձեռքիցն էլ խոփր խլեց,
Այդ սուր ու խոփից մեր շղթան կռեց,
Վայ մեզ, շղթայով կապած գերի ենք,
Հիմի էլ լռենք:

Հիմի էլ լռենք, երբ մեր թշնամին
Սոսկալի զէնքը ըռնած մեր գլխին,
Կուլ-տալ է տալիս արտասուենք առատ,
Աղէխարշ բողոք վաղուց տալիքատ,
Մեր գլուխը լալու՝ եփրատ ուր պտրենք,
Հիմի էլ լռենք:

Հիմի էլ լռենք, երբ մեր թշնամին
Լիբբ գոռոզութեամբ լցրած իր հոգին,
Արդարութեան ձայնն հանած իւր սրտից,
Արտաքսում է մեզ — մեր բնիկ երկրից,
Պանդո՛ւխտ, հալածեալ երղբայրք, ուր դիմենք,
Հիմի էլ լռենք:

Հիմի էլ լռենք, երբ մեր թշնամին —
Անհոգ մեր բերած ծանր գոհերին,
Իւր լիբբ, նզոված ձիւքը կարկառեց —
Ազգութեանս վերջին կապը պատառեց,
Հայի կորուստը մօտ է, ի՞նչ անենք,
Հիմի էլ լռենք:

Հիմի էլ լռենք, երբ մեր թշնամին
Արհամարհելով մեր փառքն ազգային,
Մեր եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,
Փառնազգեստ գայլին մեր գլուխը դրաւ,
Սուրբ խորանն չունենք, արդ ուր աղօթենք,
Հիմի էլ լռենք:

Հիմի էլ լռենք, մարդիկ ի՞նչ կասեն,
Երբ մեր տեղ բարեր, ապառաժք խօսեն, —
Չէ՞ն ասիլ, որ հայք արժանի էիք

Այդ ստրկական անարգ վիճակին.
Մեր սուրբ քաջ նախնեաց գործերը գիտենք,
Մինչև երբ լռենք:

Թող լռէ մունջը, անդամալոյծը,
Կամ որոնց քաղցր է թշնամու լուծը.
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ, —
Ե՛կ անվախ ելնենք թշնամու առաջ,
Գոնէ մեր փառքը պատուով յետ խլենք,
Ու այնպէս լռենք:

Ա Ն Դ Ր Ա Ն Ի Կ Ի Ն

Հայաստանի անկախ Սասուն,
Քո ժայռերում կան շատ քաջեր,
Հռչակէ նրանց անուն,
Հաւատարիմ քո պաշտպաններ:

Անդրանիկը կռուում է,
Թշնամուն կոտորում է.
Ձի ուզում ստրկութիւն,
Մինչև գտնի ազատութիւն:

Հայդուկները զէնք վեր առած,
Հայրենիքի սիրով վառուած,
Աչքերումը կրակ լցուած,
Հոգով-սրտով են մեշտ կանգնած:

Անդրանիկը կռուում և այլն:

Քո անառիկ դիւքերը՝
Պաշտպանում են հայդուկները,
Նրանց հերոս Անդրանիկը՝
Պաշտպանում է հայրենիքը:

Անդրանիկը կռուում և այլն:

Հայրենիքի տէր ու պաշտպան,
Ունիս փամփուշտ ու հրացան...

Մօտ է հայի ազատութիւն,
Հայաստանի անկախ Սասուն:

Անդրանիկը կուռում և այլն:

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Հայրենիք սրբազան, իմ սիրուն աշխարհ,
Թռչում եմ դէպի քեզ հոգովս անդադար,
Բայց աւաղ, ես բանդում փակուած եմ անտես,
Պատերազմի դաշտում, չեմ կուռում և ես:

Հանապազ տանջուեցայ քո ճակատագրով,
Սրտում շղթաների ձայներ կրելով,
Չեմ կարող մոռանալ իմ ազգ հարազատ,
Ախ, կամ ոչնչանալ, կամ լինել ազատ:

Քաջ ընկերներովս հեշտ է ինձ կուռել,
Եւ սուրբ ազատութեան քաղցր է մեռնել,
Բայց աւաղ, այս բանդում փակուած եմ անտես,
Պատերազմի դաշտում չեմ կուռում և ես:

Ձը գիտեմ ինչպէս է կռիւը հրդեհում,
Ես չունիմ ոչինչ լուր, բայց լուրն է թռչում,
Տարւում է միշտ համբաւ սպանութեան անեղ,
Թափւում է ազգ-արիւն, բայց ես չեմ այնտեղ:

Ախ քո ազատութիւն, փոթորիկի մէջ է,
Եւ վառ արշալոյսով քո օր կարմրում է.
Թող այստեղ չարհարուիմ անծանօթ կապուած —
Միայն բեզ, հայրենիք, տեսնեմ ազատուած:



ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԵԿԱԾ ԶԻՆՒՈՐ...

Հայաստանից եկած զինւոր,
Սիրական, կեանքիս հատոր.
Քեզ կըսպասէի օրէցօր,
Շողշողուն գէնքերիդ մատաղ:

Արկածալից կեանքի խորհուրդով
Լեռներ ես անցել շտապով.
Արեգակն է այրել տապով,
Սևորակ պատկերիդ մատաղ:

Կը գաս զոհերի երկրէն,
Պատմէ Մոզսացի Նսթէրէն,
Խօսիր Գիսակի խօսքերէն,
Սրտաշարժ խօսքերիդ մատաղ:

Զով Սասունի հովէն կուգաս,
Վանայ ծփան ծովէն կուգաս,
Անդրանիկի քովէն կուգաս,
Սար ու ձոր ընկած գլխիդ մատաղ:

Սերոր Փաշի գերեզման
Տեսնել ես իմ սիրական.
Տեսնել ես ողջ Հայաստան,
Էգուցւայ ճամբիդ մատաղ:

Հայաստանից եկած զինւոր,
Սիրական կեանքիս հատոր.
Քեզ կըսպասէի օրէցօր,
Ապագայ յոյսերիդ մատաղ:



*
* *

(Գամառ-Քաթիկա)

Հագիւ լրացաւ քսան ու մէկ տարիս,
Աղումազ բըսաւ երես ու ծնոտիս,
Թշերէս կարմիր վարդեր կը կաթի,
Զիւերս ամուր—ասես երկաթի:

Տուէք ինձ սարեր, սարեր կործանեմ,
Ծառը արմատով գետնէն կը հանեմ,
Սուր ատամներովս երկաթ կը ծամեմ,
Մէջս այդքան ոյժ—ասէք ինչ անեմ:

Առաջեւ դէք մարդ հարիւր-հազար—
Զարդեմ, տրորեմ գերդ բողկ ու գազար,
Ինչ այլ շաբթու մէջ, այն ես օր կանեմ,
Մէջս այդքան ոյժ—ասէք ինչ անեմ:

Իմ պէս բիւրերով լի է Հայաստան,
Նրա սուրբ հողին ըլեմ ես զուրբան,
Մարմինը ուժեղ առիւծ է հային—
Այլ ափսոս, թմրած է նրա հոգին:

Թէ մի օր զարթնի նրա վեհ հոգին,
Նա պարզ կը ցուցնէ Օսմանի ազգին—
Ով էր երկուսէն ստրուկ կամ տէր,
Ա՛խ երբ պիտ թնդան խեղճ հայի սրտեր:



ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՀԱՄԲՈՅՐԸ

(Ա. Նեզրի)

Սիրում եմ ես ջրուտ, ուժեղ բազուկները բանուորի,
Եւ յաղթանդամ վէս հասակը, ալ գոյնը թուխ այտերի,
Զնաշխարհիկ երջանկութեան, յոյս է նա ինձ խոստանում
Սէրը նրա կրքոտ, անզուսպ հուր-հոսանքի նմանում:

Նա կուրծք ունի—ժայռից ամուր, անմատչելի ախտերին,
Իր անաղարտ սրտի համար սիրելի է շատերին,
Զունի ոսկի, բարձր կոչում և հազին թանգ շորեր,
Ինչո՞ւ ապա ցանկանում ենք նրան—մերը համարել:

Որովհետեւ այդ թաւ կրծքում անզուսպ կրքով առնական,
Սէրն է շնչում, ապրում, յուզում, որպէս վայրի մի գազան,
Նրա գրկում կըմոռացուի և բասրանքը խուժանին,—
Համեստութիւնն այրուած կրքից չի կարմրիլ այդ յամին:

—
ԶԱՅՆ ՏՈՒՐ Ո՛Վ ԾՈՎԱԿ...

Զայն տուր, ով ծովակ, ինչո՞ւ ես լուել,
Ողբակից լինել չըկամիս դժբաղդիս,
Շարժեցէք զեփիւռ, ալիքը վէս վէտ,
Խառնեցէք արտասոււնքս այս ջրերի հետ:

Հայաստանի մէջ անցեալին վկայ,
Սկզբից մինչև այժմ, խնդրեմ ինձ ասա—
Միթէ այսպէս կըմնայ Հայաստան—
Փշալից անապատ իբրև բուրաստան:

Միթէ այսպէս ազգը խղճալի,
Կը լինի ծառայ օտար իշխանի,
Միթէ Աստուծոյ աթոռի մօտին,
Անարժան է հայն և հայու որդին:

Արդեօք զալճւ է մի օր, ժամանակ—
Տեսնեմ Մասիսայ գլխին մի դրօշակ,
Եւ ամեն կողմից պանդուխտ հայ որդիք,
Դիմել դէպ իրանց սիրուն հայրենիք:

Ծագիր նոցա դու քո լոյս, գիտութիւն,
Որով բարով եկան նոքա բնական,
Կը ճանաչեմ մարդուս կեանքի խորհուրդը,
Կը լինի գործով տիրող փառաբան:

*
*
*

Ձայն տուր, ով ֆիդայ, ինչու ես տրտում,
 Լուռ ու մունջ նստած՝ երկար մտածում,
 Շարժեցէք շուտով սուրեր շողշողուն,
 Թափեցէք կրակ, թշնամաց գլխուն:

Պարզեցէք դրօշ վեհ դաշնակցութեան—
 Լինի առաջնորդ մեր ազատութեան,
 Քանի այսպէս է ազգը խղճալի,
 Ձինեալ կըմնան ամբողջ ֆիդայիք:

Շտապենք, եղբայրք, խմբուենք մի տեղ,
 Դաշնակցութեան դրօշակ ծածանուի այստեղ,
 Թափենք մեր արիւն իբրեւ պարտական—
 Թող սարսի Սուլթան, Աբդուլ, Համիդ, խան:

Շուտով միանանք, ով քաջ հայդուկներ,
 Վրէժ են գոչում մեր նահատակներ,
 Մօսին հրացան ձեռքներէս բռնած,
 Թունաւոր փամփուշտը կըծքերէս գցած:

Հայ զինուոր եմ ես, անձնագորհ ֆիդայ—
 Դժբաղդ հայրենեաց անցեալին տեղակ,
 Մենք ենք սերունդը բուն վեհ հայկական,
 Տոհմս դիւցազանց, որդիք Թորգոմեան:

ՁԵՌՔԵՐՍ ԿԱՊԱԾ

Ձեռքերս կապած, ոտքերս շղթայած,
 Կասէ Եւրոպան «հէր չելաք ոտքի,
 Ձեզ ազատութիւն, ձեզ օրէնք չկայ,
 Տարէք, կրէցէք դուք կեանք ստրուկի:

Վեց հարիւր տարի մեր երակներէն
 Կաթ-կաթ ծորեցաւ մեր վերջիւր արիւն,

Եւրոպան կասէ՝ շուռ գանք հայերին,
 Հայի մէջ չկայ ոյժ ու քաջութիւն:

Ամբողջ Հայաստան ասել չէ մնացել,
 Կասեն «հայք ինչո՞ւ թուր չը վերուցին»,
 Միթէ վառողի հոգս պէտք էր անել.—
 Թէ պէտք էր բրդել չոր հաց քաղցածին:

Եւրոպ, մոռացար, երբ օրադաշտը—
 Ձեռքը թուր կուգար շիտակ քո ծոցը,
 Բայց հայ անեղ աւարայր դաշտը
 Շիջուց մօլեռանդ այն կրօնի բոցը:

Եւրոպ, մոռացար այն կուռ հարուածը,
 Որ պատրաստել էր Իսլամը քո որդոց,
 Հայը չուզեց քո արտասուէնք ու լաց,
 Քաղաքաց հրդեհ, խողխողանք մարդոց:

Երկհարիւր տարի արիւն թափելով,
 Դեմ տուեց անեղ ուժգին այն զրոհին,
 Մինչև որ ձեր կեանքը դարձաւ ապահով,
 Մինչև որ ուժէն ընկաւ թշնամին:

Եւրոպ, մոռացար, երբ քո քաջերը,
 Անապատի մէջ մնացին քաղցած,
 Ինչ պիտ օգնեն նոցա զէնքերը,
 Թէ որ հայքը չտային նոցա կուշտ հաց:

Ապերախտ Եւրոպ, յիշէ հայերուն,
 Դու շատ մի խաբուիլ սուրի շահիւնէն.
 Արիւն թափելը չէ առաքինութիւն,
 Եւ ոչ նա ազատ ոգու նշան է:

Մենք խաղաղութիւն փրկէն սովրեցանք,
 Նեղիչին ներել՝ Աւետարանէն.
 Միթէ մենք այսօր պատուհասեցանք,
 Միթէ խաբուեցանք մեր բարերարէն:

Ինչերո՞ւս էր պէտք առաքինի վարք,
է՞ր չեղանք հայրս օրիկայ, մարդասպան...
Անշուշտ կը դասէր մեզի ազգի կարգ
Արիւնածարաւ, գոված Ներսիսան:



* * *

Ձայն մը հնչեց էրգրումի, հայոց լեռներէն,
Թունդ-թունդ ելան հայոց սրտեր գէնքի շաշիւնէն:

Հայ գիւղացին դարուց ի վեր սուր, գէնք չըտեսած,
Դաշտը թողեց ու սուր, հրացան բահի տեղն առաւ:
Անմիութիւն տունը քանդող հայոց խեղճ ազգին,
Հրաժարուէք ու տեղ տուէք միութեան ձայնին:

Լսեց թուրքը ու սառեցաւ արիւնը լրբին,
Չէր երազում հայուն տեսնել նա այս վիճակին:
Ներսիսային լուրը հասաւ հայոց միութեան,
Ուրախական ողջոյն տուեց հայրենասէրին
Ուսումնալոյս ազատութիւն, այժմ քեզ ենք ընկեր,
Սուր, հրացան, եռանդ քաջի պաշտպան անվեհեր:

Ճ Ա Կ Ա Տ Ա Գ Ի Ր

(Ա. Նեզրի)

Մնարիս մօտ լուռ գիշերին յայտնուեց մի չքնաղ կին,
Սրած դաշոյն, շիկած ածուխ, ասես աչքերը լինէին.
«Դուք մարդիկ, ինձ կնքեցիք վիշտ, տառապանք անունով»,
Այդպէս են ինձ այժմ կոչում—ասաց կինը ժպտալով:

Ես սարսեցի... «Հանգստացիր, խեղճ իմ գաւաղ փոքրօքի,
Այսօրուանից իմն ես միակ, չեմ գիշանի ոչ ոքի,
Յետքէդ կուգամ մինչ գերեզման—խինդ ու լացդ կխեղու,
Ա՛խ, հեռացիր...» բայց չէ ուզում նա աղերսս լսելու:

Մեկ կանգնած է արձանի պէս դժբախտութեան թագուհին,
Բաղդ այնտեղ երկնքումն է լուկ սահմանուած թշուառ կին.
Նոճիների մեռած կոկոն, զրկանքների դու դատրիկ,
Բաղդ այնտեղ է սահմանուած, շիրիմի դալուկ որբ ծաղիկ:

Ես արթնացայ... «Ա՛խ, ես կարօտ դեռ իմ ջահել հասակում,
Կուզէի, որ բաղդը բերէր երջանիկ օր այս կեանքում,
Կուզէի, որ կուրծքս ուռչէր ցնորալից յոյզերով,
Ապրէր, շնչէր, ոգևորուէր՝ կենսուրախ, վառ սիրով...»:



(Բաբա շիկ)

Հասակս քսան տարեկան,
Հրացան տուէք բարեկամ,
Մենք չենք ուզում ստրկութիւն,
Մեզ խրախուսող մայրեր շատ կան,
Աւանդ, աւանդ, աւանդ.
Ինչո՞ւ ենք մնացել խաղաղ:

Խմբեր ունենք Պարսկաստան,
Շուտով կանցնեն Տաճկաստան.
Ունինք բազում հերոսներ,
Կուգան քեզ, մայր Հայաստան:

Հրացանը ուսիս կախեմ,
Ես իմ կեանքս պիտ թանգ ծախեմ.
Կեցցէ՛ն կտրիչ հայ հերոսներ,
Թշնամու գէմ միշտ անվախ են:
Աւաղ և այլն:

Սուլթան, գլխիդ դու միշտ վայրբեր,
Քանի որ կան Խան, Մուրադներ,
Կեցցէ՛ն նրանց թիկնապահներ,

Մեր հայրենիքը չէ անտէր:
Աւաղ և այլն:

Միջագ, երգովդ վռագէ,
Ուրտեղ ճշմարիտ է՝ հոն վազէ.
Թէկուզ հանեն քեզ կախաղան,
Ուղղութիւնը դու միշտ պարզէ:
Աւաղ և այլն:



ԻՏԱԼԱՅԻ ԱՂԶԿԱՅ ԵՐԳԸ

Մեր հայրենիք թշուառ, անտէր,
Մեր թշնամուց ոտնակոխ.
Իւր որդիքը արդ կանչում են,
Հանել իւր վրէժ, քէն ու ոխ:

Մեր հայրերիք շղթաներով
Այսքան տարի կապկապած,
Իւր քաջ որդոց սուրբ արիւնով
Պիտի լինի ազատուած:

Ահա, եղբայր, քեզ մի դրօշ,
Որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղայ,
Արտասուներով լուացի:

* Նայիր նրան երեք գոյնով՝
Նուիրական մեր նշան.
Թող փոփոխուի թշնամու դէմ,
Թող կործանուի Աւստրիան:

Ահա իմ գործ, ահա դրօշ,
Շուտ ձի հեծիր քաջի պէս.
Գնա փրկիր մեր հայրենիք,—
Պատերազմի վառ հանդէս:

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի, որ իւր ազգի
Ազատութեան կը զոհուի:

Գնա, մեռիր դու քաջի պէս,
Թող չ'տեսնէ թշնամին.
Քո թիկունքը—թող նա չասէ,
Թէ վատ է իտալացին:

Ասաց, տուեղ օրիորդը
Իւր եղբօրը մի դրօշ,
Մետաքսից էր ազնիւ գործած,
Ուր երեք գոյն կան որոշ:

Եղբայրն առաւ և ողջունեց.
«Իմ սիրելի բնքոյշ քոյր».
Առաւ զէնքը՝ սուր, հրացան,
Հեծաւ իւր ձին սևաթոյր:

«Քոյրիկ, — կանչեց քաջ պատանին,
— Մնաս բարև սիրական.
Այս դրօշակին պիտի նայի
Ամբողջ բանակ Իտալիան:



Մենք պէտք է կռուենք և ոչ լաց լինենք,
Ազգի կորուստը զէնքով յետ խլենք.
Այսքան դար լացինք ո՞վ է լսողը,
Մեզ ի՞նչ շահ բերեց արցունքի ծովը:

Այլևս չը լանք և ոչ լաց լինենք,
Կրակուած սրտով մեր գործը վարենք,
Անվեհեր քաջին այս է պատկանում,
Միշտ ազատ մեռնել կռուի լայն դաշտում:

Մոլի և երկչոտ տաճիկը թող լայ,
 Երբ հայ քաջի դէմ կռիւ դուրս կուգայ,
 Մենք վախեցող չենք մահից, տանջանքից,
 Եւ ոչ էլ քիւրդի մահու գնդակից:

Անէծք տյն հօրը՝ չի մղում որդուն,
 Որ ազգի սիրուն հա թափէ արիւն.
 Ամօթ այն հային և քիւր նախատինք,
 Որ ազգի սիրուն չի գործում բարիք:

* *

Մենք անկեղծ զինուորներ ենք առանց ի վիճակ,
 Ուխտել ենք ծառայել երկար ժամանակ,
 Պարսկաստանի խորքից եկաւ խիստ նամակ,
 Գնում ենք բարով, կուշանանք տարով...
 Արեան սուր, հուր, թուր, պատերազմի դաշտ,
 Կըսպասեն մեզի:

Դուշմանը մեզ տուաւ «Եան Ֆիդայ» անուն,
 Այդ անունն համաձայն տեսաւ զօրութիւն.
 Մենք չենք ուզէր ազատ կամայ բռնութիւն,
 Ուխտել ենք կռուել, այդ սիրոյ մեռնել,
 Համոզուած ենք, որ այդ միջոցով կայ—
 Հայոց փրկութիւն:

Ստամբուլը պիտի լինի արեան ծով,
 Ամեն կողմից կռիւ կը սկսուի շուտով.
 Կոտորենք Բաշկալայ, անցնենք հեշտ կերպով—
 Աջից Վարդանը, ձախից Իշխանը,
 Գրաւենք Աղբակ, տարածենք սարսափ,
 Փառք Դաշնակցութեան:

Բաշկալայ գաւառում այն պատերազմին,
 Աւելի մեծ սարսափ տիրեց Սուլթանին.

Քաջ Զէյթունը յաղթեց վատ, չար զազանին,
 Կեցցէ Զէյթունը, խրոխտ Սասունը, Դաշնակցութիւնը,
 Անխտիր օրէնք, պարծանք հայերուն:



Ե Ա Ր Ա Ն Ի - Բ Ն Բ Ո Ւ Ն

Նպատակիս գէթ մի մասը կատարուէր—
 Եարալի բլբուլ եմ,
 Հայրենիքիս աքառ տեսնեմ ու մեռնեմ,
 Եար արի, տուն արի, շուտ արի, բլբուլ եմ,
 Սարերի գիւլն եմ:

Ա՛խ, իմ դարտս շատացել է չեմ կարող,
 Եարալի բլբուլ եմ,
 Դարդի ձեռքից ո՞ր ջուրն ընկնեմ, ազատուեմ,
 Եար արի, տուն արի, շուտ արի, բլբուլ եմ,
 Սարերի գիւլն եմ:

Ա՛խ, անբախտ հայդուկիս, Տէր իմ, Դու խղճայ,
 Եարալի բլբուլ եմ,

Մի թողնիր թուրքի գնդակով զուր գնամ կորչեմ,
 Եար արի, տուն արի, շուտ արի, բլբուլ եմ,
 Սարերի գիւլն եմ:

Ո Ն Ո Ր - Մ Ո Ն Ո Ր

Ոլոր-մոլոր Կուրն էր գալիս Կովկաս սարերէն,
 Մի աննման ձայն էր գալիս էն միւս ափերէն,
 Փախէք աստղեր, արեւ ծագեց Կովկաս սարերէն,
 Սաթենիկն եմ, սիրուն եմ երկնից լուսնեակէն:

Հայոց քաջեր, քաջ զրէք զէնքեր շուտ ձեր ձեռքերէն,
 Սաթենիկն եմ, կըյաղթուէք գուք իմ սիրոյ սրէն.

Քեզ եմ ասում, քաջ Արտաշէս, դուրս եկ վրանէն—
Սաթենիկն եմ, կ'յաղթուես, իմ սե-սե աշերէն:

Քէն մի պահիր, վրէժ մի ուզիր իմ Աւաններէն,
Բարձր է Կովկաս, քաջ են սրանք Մասսեաց քաջերէն.
Ձայն եմ տալիս—ձայն տուր ձայնիս քո խոր բանակէն,
Դուրս եկ մէյդան, թէ չես վախենում սիրոյ նետերէն:

Ալան, Ալան, յաղթութիւնս առար իմ ձեռքէն,
Ո՞նց դիմանամ, հալուում է իմ թուրը քո կրակէն,
Ալան, Ալան, փառք ու պսակս առար իմ գլխէն—
Ո՞նց դիմանամ, սիրուն ես դու մեր սիրուններէն:

Հազար կրտամ, տասն հազար իմ անթիւ գանձերէն,
Քեզ ինձ կառնեմ հարս-թագուհի, քաջ Աւաններէն.
Ասաց, հեծաւ արի արքայն սեն իւր ձիերէն—
Առիւծի նման ճնշեց անցաւ Կուր գետի մէջէն:

Հասաւ, հանեց իւր կարմիր թուկն օդ ոսկեղէն,
Ձգեց—ընկաւ Սաթենիկի մէջքի մէջ տեղէն.
Թուր, փախիւր, իմ գեղեցիկ սե ձիս հրեղէն,
Թևիդ վրայ կոյսն եմ խլել քաջ Աւաններէն:



Մ Շ Ա Կ

Շինքը արեւառ, քրտինքը երեսին, բեռը շալակած
Դարիւր մշեցին մէյդանի միջին կանգ առաւ յոգնած,
Կոշտացած ձեռքը երեսին տարաւ քրտինքը սրբեց,
Բայց երբ որ աչքը չորս կողմը դարձուց ծանր «ախ» քաշեց:

Տեսաւ նա չքեղ մեծ-մեծ դարբասներ գոյնգոյն ներկած,
Պատշգամբի վրայ դողալ հայ կանայք շարիշար նստած.
Դումաշ գովհարով մառմառ թշերին հով ու գով տալիս,
Փրփուր շորերը թեթե քամիէն փոփոսն գալիս:

Ջուխտակ արտասունք ջուհար ակի պէս աչքից ցոլացին,
«Մշակ չի՞ թէ միտքդ բերիր քո կարօտած եարին».—
Մըշակը լուռ էր, նա ինձ չտուեց ոչինչ պատասխան,
Դարբասը թողած, աչքերը դարձուց նա դէպի մէյդան:
Երկուծ կառքի մէջ տեսաւ թէք ընկած մէկ նիհար տղայ,
Ձաշմակը աչքին, բերնին նարգիղէ զինչ թուրքի տղայ,
Մշակի շրթին անշմարելի մէկ ժպիտ խաղաց,
«Մշակ, այդ ի՞նչ էր, որ սիրտդ խօսեց, ծաղր էր, թէ՞ նախանձ»:

Մշակը ինձի պատասխան չըտուեց կասես թէ լալ էր,
Բայց հողեբանը իսկոյն կիմանար հողին ինչ հալն էր,
Մէյդանը թողած նա աչքը դարձուց լայն մեծ փողոցին,
Ոչ ոք չիմացաւ, թէ այն րոպէին ի՞նչ խօսեց հողին:

Գունդ-գունդ գալիս էր ձիով ու հետի սպառազէն լաշքեար,
Առաջն առած հարիւր-հազար թմբկահար փողեր,
Թնդալի երգով զօրքը տանում էր իր յաղթութիւնը,
Վայ քեզ, խեղճ... քանդել է քո ազգի տունը:

Մշակը լուռ, մունջ մէկ կողմ քաշուեցաւ դողդողջիւն ոտքով,
Իր ճամբան գնաց ծանր տնքալով, կամաց երգելով:

Մ Ա Ն Ո Ի Շ Ա Կ.

(Ա. Նեգրի.)

Տեսնում ես ինչպէս մանուշակը լուռ,
Պճնուած փարթամ իր զարդարանքով,
Նայում է դէմքիս՝ թախծալի, տխուր,
Նայում ամօթխած ու աղերսանքով:

Ա՛խ կար ժամանակ երբ սիրում էի,
Մի դոյզ սե աշեր նոյնքան թախծալի,
Սիրող ու քնքոյշ. բայց նոքա մեռան,
Եւ մատաղ սէրս իրանց հետ տարան:

Բայց թէ ճիշտ է, որ մեռելները
Գաղտուկ հրաշքով իրանց հիւթերը
Տալիս են բոյսին, վարդի ցողունին,
Թուփ ու խօտերին, ծառերի բունին,

Դո՛ւ, ո՛վ Մանուշակ, որ տխուր այդպէս,
Նայում ես դէմքիս, կազմում ես անշուշտ
Մասնիկը հոգու իմ այն սիրածի,
Որին կլանեց սև հողը անկուշտ:

Ս Է Ր Ո Բ Փ Ա Շ Ի Ն

Ով որ քաջ է ինչ կսպասէ,
Արդէն ժամանակ է թող գայ,
Մահ պատերազմի օրհաս է,
Ով որ անվախ քաջ է, թող գայ:

Կամ կռուենք պարպենք, վերջանանք,
Կամ դէնքով փրկութիւն ստանանք.
Կռուելով փրկենք հայրենիք,
Ազնիւ մտածողը թող գայ

Այս մեր աշխարհ սար է Սիփան,
Կռիւ ունինք միշտ անխափան,
Բողոքով փրկենք հայրենիք,
Այս յոյս ունեցողը թող գայ:

Այս հինգ դար է մեզ կըսպանեն,
Բռնի կրօնից կը հանեն.
Մեր կին, աղջիկներս կըտանեն,
Պատիւ ունեցողը թող գայ:

Օսմանեան լիբը հաճերը,
Հաւասար է խոշոր վէճի,

Ելդըզի կրօնը թող ջնջուի,
Սուլթանին ատողը թող գայ:

Երկաթէ մարդ, քարէ հոգի,
Վրէժխնդիր լինել թուրքին.
Անվախ քարի տակ չողողը,
Անսխալ խփողը թող գայ:

Վերջապէս մենք ունինք կռիւ,
Զէնքով պիտի մաքրենք հաշիւ.
Մեր հայրենեաց փառքն ու պատիւ,
Սէրօք Փաշին սիրողը թող գայ:



Ո Ր Դ Ի Ն

Մենաւոր բանդի հիւանդանոցում՝ առաջին անգամ
Նա բացաւ անմեղ իր աչուկները պարզ ու մանկական,
Եւ նրա հնչիւն ու կայտառ ճիշդ լսեցին բանդի
Խոնաւ պատերը, այդ վկաները վշտի, ամօթի:
Թոյլ թաթիկներով նա պաշտպանւում էր յամառ ու անզօր,
Կարծես զգում էր երկիւղ, նախատինք կամ ամօթն իր մօր,
Եւ ահա կանգնեց խաւար ժպիտով յանդիման նրան,
Համը մի ստուէր ու լայն տաքածեց թևերը մահուան:
Բայց մայրը որդուն խանդոտ թևերով իր կրծքին քաշեց,
Քաշեց ու փարուեց և այնպէս մնաց անշարժ մէկուսի,
Կուրծքը իր կրծքին, շուրթը շուրթերին զողզոջուն սեղմեց:
Իսկ երբ կամարին վառուեց արշալոյս, փրկութեան սուրբ
կոչ,

Մայրական դէմքը, որ խոնարհուել էր մանկան երեսին,
Նման էր ոչ թէ ընկածի դէմքին, այլ մի սուրբ կնոջ:

ՄԱՅՐԱԿԱՆ ԲՆԱԶԴ.

(Պատիւ

Ես զաւակ չունիմ. մոռացութեան մէջ
 Կրկորչի եռուն իմ մատաղ հասակ,
 Անհունձ խօտի մէջ, սառը աղբիւրի մօտ,
 Այդպէս է բուրում համեստ մանուշակ:

Օ՛, դու սրբազան համբոյր մանուկի,
 Որ սիրտ ես տալի անմխիթարին,
 Առաջին թոթով աղօթք հրեշտակի,
 Որ մայրն է շնչում մանկան շուրթերին:

Երգում եմ ոյժը բեղմնաւորութեան,
 Որը ծնում է հոգու հիւթերից.
 Եւ աղբիւր յուսոյ, մխիթարութեան,
 Եւ ծաղիկ սիրոյ ասաւածանման:

Երգում եմ պայթումն ցաւոյ արգանքի—
 Ա՛յն վսեմ ժամը ծննդականի,
 Որ մի ուրիշ կեանք փրկալու համար—
 Իր կեանքն է դնում մահու սեղանին:

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

(Ա. Նեզրե)

Սառը նկուղի խոնաւ անկիւնում խօրի վրայ
 Պառկած է մենակ որը մանկահասակ հիւանդ մի տղայ,
 Լուռ ապաքինում նրա տանջանքին, խնամող Աստուած,
 Բանոր մանուկ է նա, անօգնական ողջից մոռացւած:

Հրեշտակի թևով առաքիր նրան տեսիլք ցնորայից,
 Այդպէս փարատուի գոնէ մօտալուտ մահուան տագնապից,
 Նա որ չըտեսաւ, վիճակը խեղճի զրկանք էր անվերջ,
 Ծեծ ու հայհոյանք գործարանային խուլ ժխորի մէջ:

Եւ դժոխային խիստ աշխատանքից ուժասպառ, տարտամ,
 Որպէս հնձած հասկ օրօրուեց ընկաւ մեքենայի տակ...
 Դիտեմ, Արարիչ, առանց սուրբ կամքիդ և մազն անգամ
 Զի պակսել մարդուց և սակայն որբին մի թող անխնամ:

Սփոփիր նրա կսկիծն ու լացը... Հրեշտակը մահուան
 Թող իր ջերմ սիրով, քաղցր զրոյցով փաղաքշի որբին,
 Եւ կեանքին անհամբոյր, և քաղցր տանջող նրանից անբաժան
 Թող անհետանան խղճուկի մտքից մահուան բոլէին:

Յ Ո Յ Ս

Թշուառութիւնը թունաւոր խայթով՝
 Սիրտս է շանթում ու վիրաւորում,
 Բայց հէնց որ խելքս կենդանի թափով
 Զարթնում է նորից—ուղեղս լարում:

Սլանում է նա որպէս փոթորիկ
 Դէպի այն ամեն վաստակեալ մարդիկ,
 Որոնք յուսահատ, վհատման ժամին
 Կեանքի հետ կռուել, մաքառել կամին:

Որպէս սէգ արծիւ՝ միտքս թռչում է
 Բարձր ամպերից էլ աւել հեռու,
 Ուսկից սարսափով մտաբերում է,
 Որ վիշտը իրեն էլ չի հասնելու:

Եւ սիրտս նորից առաջուայ նման
 Լցում է յուսոյ վառ զաղափարով,
 Որպէս անյատակ ծովը անսահման,
 Որ լի է անգին լալ ու գոհարով:



Դ Է Պ Ի Խ Ա Ն Ա Ս Ո Ր

Յուլիս ամսի քսանուհինգին,
Մօսին հրացան պատրաստ ձեռքին,
Քրդի ոխը պահած սրտում,—
Դէպ Խանասոր դիմեց ուժգին:

Երեք հարիւր հայ քաջերով—
Բոլորը զինուած մօսիններով,
Թշնամեաց մեծ ջարդ տալով
Ընկաւ Կարօն վրէժ կանչելով:

Աքուլեսցի քաջ պատանի,
Հօրդ ու մօրդ ու լուր տանի.
Քեզ պէսներին միշտ երանի,
Դուք էք յոյսը հայրենիքի:

Ո՞վ ունիս դու, որ քեզի լայ,
Գերեզմանիդ վրայ ողբայ,
Եւ թշնամուցդ վրէժ առնի—
Խեղճ հայերին օգնող չկայ:



Մ Ո Ի Ր Ա Յ Ի Կ Ը.

(Ա. Նեղրի.)

Ողորմութիւն ես աղերսում դու ինձանից, ո՞վ թշուառ,
Ցնցոտիքդ չէ էլ ծածկում մարմինդ մերկ ու նիհար,
Մաշուած կուրծքդ բաց է ու մերկ, որպէս ինքը, տան-
ջանքը,

Նա իր համր հեծեծանքով վրդովում է իմ կեանքը.

Գոնէ մի կերպ դու ապրում ես օգնող ձեռք էլ միշտ ունես,
Իսկ կարիքի ծանր ժամին ընկերներդ կօգնեն քեզ,

Մեծատունը կարեկցաբար միշտ բարձրից է քեզ նայում,
Վիրաւորել սարուկ հոգուն ցածութիւն է համարում:

Դու հարուստ ես, այլ ոչ աղքատ, լոկ քեզ այդպէս կերելի,
Ահա ես եմ մուրացիկը, կարօտ սիրոյ համբոյրի...

Գիշեր-ցերէկ սիրոյ ծառաւ, լուռ տանջւում եմ ես գաղտնի,
Բայց ոչ... գուցէ համաձայն եմ մեռնել առանց սիրելու,
Քան կորցնեմ հալաբտութիւնս ու դամ ինձ սէր մուրալու:

*
* *

Յիշիր ժամը այն երջանիկ,
Երբ իմ գիրկը նետուեցիր.
Եւ հրճուելով ինչպէս մանկիկ՝
Այրուող սրտիս սեղմուեցիր:

Այն ժամանակ ամբողջ աշխարհք
Միայն ինձ էր պատկանում,
Երջանկութիւն, կեանք ու բերկրանք—
Ամփոփուած էր իմ սրտում:

Եւ լուսինը գեղածիծաղ,
Շողշողալով երկնքում,
Ձինջ թերթերից ուրախ-ուրախ
Մեր սէրն էր օրհնեղում:

Այն ժամանակ յաւերժական
Եւ բունն սէր խոստացար,
Դու ուխտեցիր մինչ գերեզման
Ապրել միայն ինձ համար:

Մինչև այսօր այդ խոստումին
Լուռ վկայ են աստղերը.
Անմահ վկայ են այդ ուխտին
Լուսնի պայծառ շողերը:

Բայց խոստումդ նուիրական
Ոտիդ տակը ձգեցիր.
Այրուող սիրտս դու յաւիտեան
Խորտակեցիր, փշրեցիր:

ՆՊԱՏԱԿԻՍ ՀԱՍՆԵՄ...

Նպատակիս հասնեմ միայն,
Թող զիս հանեն կախաղան.
Կախաղանից խեղդուկ ձայնով
Պիտի կոչեմ «ան չայաստան»:

Ա՛խ Հայաստան սիրտս ու հոգիս
Քեզ նուիրեմ՝ ընդունէ.
Թէ կարելի է թող ես մեռնեմ,
Խեղճ Հայաստան ոտքի ելնէ:

Նորա սիրուն բանդն էլ մտնեմ՝
Պալատ է այն ինձ համար,
Ոտք ու ձեռքս շղթայակապ՝
Ներջանկութիւն է ինձ համար:

Թէ մինչև իսկ ես աքսորուեմ,
Թափառական գտնէ ինձ բախտ.
Հայրենիքիս սիրոյ համար—
Փշտ վայրեր կըլին դրախտ:

Ա՛խ, Հայաստան, դուն սիրուն մայր,
Մինչև երբ այդպէս քո որդիք
Քեզնէն հեռու պիտ հառաչեն,
Օտար աշխարհ թափառեն:

Ա՛խ Հայաստան, աչքդ դարձրու
Քեզի փնտրող որբերուն,

Այսպէս ցաւով կը տանջուեն,
Դարման եղիր հայ քաջերուն:



Ո՞վ ՁԻ ՍԻՐԵԼ...

Ո՞վ չի սիրել խնդրեմ ասէք,
Ես նրան ճնց սիրեմ կամ լինիմ ընկեր.
Ձէ՞ որ ստիպելով մեզ կը վնասենք,
Շատ կը թշուառանայ յետոյ կեանքը մեր:

Փեսան ինձի՞ է պէտք թէ՞ քեզ, հայրիկ,
Քո հաւնած մարդով ես չեմ երջնիկ.
Նրբ սիրով կապուած չեն տղայ ու աղջիկ,
Նշանն անհիմն է, պսակը անվաւեր:

Հայրիկ, քո բաղձանքը բարի բաղձանք չէ,
Այդ քո տուած կեանքը ինձ համար կեանք չէ,
Աղջիկ սեռն էլ մարդ է, ծախու ապրանք չէ,
Փող շահուել ու առարկայ չէ օգտաբեր:

Տուր ինձ այն փեսան, որին ես կըսիրեմ,
Դնամ, ուրախ սրտով կեանքս նուիրեմ.
Այնուհետև հաստատ ես պարտաւոր եմ
Քեզ համար աղօթել ցերեկ և գիշեր:

Դու ինձ մի տար մեր թշնամու զաւակին,
Ձեմ կարող զիմանալ ես այդ կրակին.
Ո՞նց թողնեմ իմ սրտի ընտրած Հայկակին,
Ո՞վ ունի նրա պէս գեղեցիկ պատկեր:

Ես սիրել եմ իմ Հայկակին յաւիտեան,
Ինձ համար մեռած է քո ընտրած փեսան.
Կապասեմ իմ ետրին, չեմ գնայ նրան,
Ծնող ես, մի գառնայ որդուդ գլխակեր:

Մի աղջկայ բերանից լսել եմ հաստատ
Այս խօսքը, հօր դէմ խօսում էր ազատ,
Թէ տեղը չը գտաւ մի աղջիկարմատ,
Շուտով կը թառամի որպէս անջուր վարդ:

ՈՐՍԿԱՆ ԱԽՊԷՐ

Որսկան ախպէր, սարէն կուգաս, սարի մարալ կը փնտրես,
Ասա եաբաբ, դուն չը տեսնիր իմ մարալիս իմ բալիս:

Դարդի ձեռքից սարերն ընկաւ, իմ մարալս, իմ բալէս,
Գլուխն առաւ քարերն ընկաւ, իմ մարալս, իմ բալէս:

Տեսայ քոյրիկ, նախշուն բալիդ, կարմիր պսակ էր կապել,
Միրած եարի համբոյրի տեղ սրտին վարդեր էր բուսել:

Որսկան ախպէր, ասա եաբաբ, ո՞վ է հարսը իմ բալիս,
Ո՞վ է գրկում չոր գլուխը՝ իմ մարալիս, իմ բալիս:

Տեսայ քոյրիկ սիրուն բալիդ,—քարն էր դրել բարձի տեղ,
Անուշ քնով տաք գնդակն էր կրծքին սեղմել եարի տեղ:

Սարի մարմանդ հովն է փչում վառ ճակատին մարալիդ,
Ծաղիկներն են վրան սգում՝ քո մարալիդ քո բալիդ:

Տ Ո Ւ Ր Բ Ա Խ Ի Ն

Ուրեմն քնաք բարով ագնիւ ընկերներ,
Մեռնեմ ձեր հոգուն երջանիկ քաջեր,
Քո հողին մատաղ Տալուրիկ ազատ,
Կեցցէս դու յաւէտ, Անգրանիկ քո քաջ:

Քաջի համբոյրով տուաւ հրաժեշտ,
Անվեհեր Տուրբախ ընկեր հարազատ:

Րոպէ չանցաւ, սլացաւ ուժգին,
Վեհ Դաշնակցութեան սուրբ անուան արժան:

Երկինքը պատել էր գունդ-գունդ սև ամպեր,
Արեգակ չըկար, մութ ու խաւար էր,
Դժուար է գատուել քաջ ընկերներէց,
Հայ ազգի սիրած ու պաշտած տեղից:

Հեռուից տեսնողը բոլորն ուրախ էին,
Երնակ կուտային քեափուր Տուրբախին,
Ահ ու սարսափով լցուած թուրք միլլաթ,
Կապուտ աչքերից արիւն կը ցայտէր:

Նժոյգ ձին նստած, ահուլի դէմքով,
Երկինք ձայն տուեց վեհ քաջի արարք,
Խնուսայ փաշէն լցուած էր դողով,
Թռչում ցոլակ, ցայտում էր կրակ:

Անհամբեր սրտով Դաշնակի ճիւղեր—
Կտրիչ Տուրբախի դալուն կապասն,
Փառք ու պարծանք էր մեզ այսպէս քաջեր,
Ուրախ լուր բերաւ ազատ Սասունէն:

ՊԱՐՁԻՐ, ԱՂԲԻԻՐ...

Պարզիր, աղբիւր, բրդի տղին ջուր տանեմ,
Պարզիր, աղբիւր, բէգի տղին ջուր տանեմ,
Աղբիւր, գիտես քիւրդը մեզի ինչ կանէ—
Մեզ կը տանջէ, կը չարչարէ, կը սպանէ:

Կար ժամանակ, երբ մենք էլ ազատ էինք,
Մեր սեփական թագաւորներ ունէինք,
Թագ ու գահից, ազատ կեանքից զրկուեցինք,
Արիւնարբու թշնամու ձեռք մատնուցինք:

Ախ, ի՞նչ անենք, որ ջուրն ընկնենք, պրծնենք,
 էլ այսպէս ցաւօտ դարձեր չը տեսնենք.
 Դէ՛հ շուտ պարզիր, բիւրդի տղին ջուր տանեմ,
 Ազատ կեանքս բանդի մէջ է—լուր տանեմ:

Կը գայ ժամանակ՝ ազատութեան դրօշակ ձեռքիս,
 Կը լինեմ առաջնորդ ազատ հայրենիքիս.
 Պարզիր, աղբիւր, Խան-Մուրադին ջուր տանեմ,
 Պարզիր, պարզիր, Հայաստանին լուր տանեմ:

Պ Օ Է Տ

Քաղցրախօս պօէտ, քո անուշ լեզուն,
 Քնարդ ներդաշնակ, հոգիդ զգայուն.
 Դու ման ես գալիս մարդկանց մէջ շքով,
 Քեզ սիրեց աշխարհ, սիրեց սերտ սիրով:

Համբաւդ հեռու աշխարհներ հասուց,
 Քեզ արժանացրեց դիւցազանց դասուց,
 Ու դեռ քո հոգին չի ելել մարմնից,
 Նա քեզ արձաններ կանգնեց մեռադից:

Քեզ սիրեց աշխարհ և սիրեց իրօք,
 Զի անուշ լեզուէդ չը լսուեց վատ խօսք.
 Լաւերիդ երբէք չը տուիր դադար,
 Երբ գովուելու ունէիր պատճառ:

* *

Սիրելի դաշոյն, ախ ատրճանակ,
 Մանաւանդ մօսին՝ կեանքն ես դու հայուն.
 Երբ ձեզ ձեռք առնէ հայդուկ ընդունակ
 Յիր ու ցան կանէ թշնամու բանակ:

Դուք էք ֆիդայուն կեանք շնորհողը,
 Փրկիչ ու արև հանդիսացողը.
 Թշնամուց վրէժ, սրտիս թախիծը
 Լուծող ճակատից ցաւ փարատողը:

Ժընեից եկած նուէր թանկագին,
 Կռուող անձնուէր այն քաջ ֆիդայուն,
 Ներշնչէ հոգի վեհ ազատութեան,
 Այս գէնքով փրկենք ամբողջ Հայաստան:

Ժընեից եկած մօսին, հրացան,
 Դեռ քեզ կրելու չեմ եղած արժան,
 Կըգայ ժամանակ, կրծքիս կը սեղմեմ,
 Հայդուկի վրէժը քեզնով կը լուծեմ:

Հայ Դաշնակցութեան անվեհեր անուան
 Անշէջ կրակը տուիր ֆիդայուն.
 Սիրտն այրուած, անձնուէր ֆիդան
 Կը փութայ գնալ դէպի Հայաստան:

* *

Սիրում էի ես գարունը պճնուած,
 Կանաչ դաշտերը ծաղկով դարդարուած.
 Զմայլում էի բիւրեղ ջրերով
 Եւ սքանչում սսխակի երգերով:

Ուրախանում էի նայելով երկինք,
 Ուր ծիծաղում, լողում էր լուսին,
 Ուր ուրախ, գուարթ ոստղերը պայծառ,
 Շողշողում էին, փայլում անբարբառ:

Հիանում էի, անվերջ հիանում,
 Շքեղ բնութիւն գովում ու երգում.

Իսկ այժմ հեռու, հրաշալի աշխարհ,
Գեղ բնութիւնդ ոչինչ ինձ համար:

Այժմ իմ միակ գարունն ու ծառիկ,
Թշուառի կեանքն է, որ լինի երջանիկ.
Ազատ և հպարտ տեսքով նա շրջէ,
Հերիք է, որքան նա շղթայուած գերի է:

*
* *

Տուր ձեռքդ եղբայր, ժամ է շարժուելու,
Ժամ է, ժամ առաջ ոտքի ելնելու,
Մօտ է վախճանը հայերիս օրհաս,
Լինել չը լինել մեզնից է կախուած:

Տուր ձեռքդ եղբայր, հերիք համբերենք,
Հերիք օգնութիւն ուրիշից հայցեմք:
Մենք ենք տանջւողը, մենք շարձարուողը—
Մենք պիտի լինինք մեզի փրկողը:

Մեր վեհ հայրենիք դարերով ճնշուած,
Դարեր շատ ու շատ մեր արեամբ ներկուած.
Պահանջէ մեզնից արիւնով ներկել,
Թշնամու արեամբ դաշտեր ու լեռներ:

Շտապիր, եղբայր, ահա քեզի գէնք,
Սրանով միայն փրկուելու ենք մենք,
Սա է գործածում մեր դէմ թշնամին,
Սա պիտի լինի պաշտպան մեր անձին:

Շտապիր, եղբայր, պատերազմի դաշտ,
Սպասում է մեզ թշնամին անհաշտ,
Աշխարհի սկզբից ամբողջ մարդկութիւն,
Այնտեղ է գտել իւր ազատութիւն:



*
* *

Վերքերով լի ջան փրկայ եմ,
Թափառական տուն չուեմ,
Եարիս փոխարէն գէնքս եմ գրկել,
Մի տեղ հանգիստ քուն չունեմ:

Արիւնոտ երկիր, սուգ ու շիւան,
Ինձ դուրս կանչեց փակ կեանքից:
Տանջուած հայրենիքի սէրը—
Ձը վախեցուց վտանգից:

Ես խաչուեցայ, ջան փրկայի—
Սկզբունքով սուրբ միալ.
Թող իմ արեան կաթիլներով,
Հայ զինուորն էլ զօրանայ:

Մակեդոնեա իմ եղբայրս—
Իմ խաչովս պսակուեց.
Եղբայրական սիրոյ գէնքով
Գազան Սուլթան խորտակուեց:

Ահա հանգիստ հող կը մտնեմ.
Յոյսս դուք էք ընկերներ,
Շարունակենք մեր սուրբ գործը,
Դաշնակցութեան վեհ քաջեր:

Կախաղանից երբ որ քամին
Ինձ տարուբերեց ճօճալէն.
Յիշէք Պեարոս Սերեմճեանին,
Թուրքերից վրէժ գոռալէն:



Ա. Խ. Պ. Է. Ր. Զ. Ա. Ն.

Ալ ու ալան ես հագել,
Կարմիր լալայ ես դառել.

Առիւծի պէս կայնել ես,
Բեղերդ ոլորել ես:

Աղբէր ջան, քեզ դուրբան,
Մեր գիւմանը դու ես, դու:

Սարի դօշին կայնել ես,
Հրացանը բռնել ես,
Դրօշակը ձեռքիդ է,
Յաղթութիւնը տարել ես:

Աղբէր ջան և այլն:

Դու ես իսկական ֆիդան,
Փամփուշտներիդ ես դուրբան.
Մազրիկ ցեղը դողում է
Քո ձեռքիցըդ աղբէր ջան:

Աղբէր ջան և այլն:

Մեր գիւմանը քեզի մնաց,
Մնացել ենք որք ու քաղցած,
Անգութ բարբարոսներից
Հայ աղջիկը անպատուած:

Աղբէր ջան և այլն:



Ք Ր Ի Ս Տ Ա Փ Ո Ր Ի Ն

Դու անցար, հերոս. դէհ հանգիստ քեզ քուն.
Դու լուսադէմին մեռար լիայոյս—
Դու ճամբորդ էիր դէպ ազատութիւն,
Երբ դեռ հեռու էր, հեռու արշալոյս:

Տես ինչ հերոսներ երգովդ ստեղծուած.
Փակեցին աչքերդ, որ հանգիստ առնուս.

Հերոսների մէջ դու մեռար հերոս—
Մարմնով դառար հող, հողով դու լոյս:

Երնէկ քո յոյսին, նա որ չէր դողում,
Երբ թոյլ տնքում էր մեր ճահիճն անյոյս.
Այն օձերն էին և գորտերը սողում,
Քանզի գալու է անշուշտ արշալոյս:

Սակայն երբ ազգդ թմբկով ու փողով,
Դէպ ազատութիւն երթայ սրտայոյս—
Դու կըգաս այնտեղ յարութեան շողով—
Բայց ննջիր... Դեռ կայ մինչև արշալոյս:

(Պատիւ)

Քո թարմ շիրիմին ես մի պսակ
Սրտիս վշտի ծաղկունքից,
Ահա, հիւսած իմ սէր հոգեակ,
Նուիրում եմ թախծալից:

Սա պսակ է բարոյական—
Միշտ անթառամ յաղթական.
Եւ յիշատակ քեզի Զանշեան,
Շատ տարիներ յարածամ:


Ա՛ռ, Յովհաննէս, իմ նուէրը
Այս մի քանի սողերով.
Թող քո անունն յիշատակ՝
Միշտ օրհնուի Աստուծով:



ՀՐԱԺԵՇՏ ՊԱՆԴՈՒԽՏԻ

Մնաս բարեաւ իմ հայրենիք, իմ մանկութեան օրօրան,
Քեզ պաշտել եմ ես վառ սրտով և կը պաշտեմ յաւիտեան:

Թէեւ բաղդս խլում է ինձ նուիրական քո գրկից,
 Բայց երբէք չէ կարող ջնջել սուրբ անունդ իմ սրտից:
 Ուր որ երթամ, ուր որ ապրիմ, թէ կուզ օտար երկրի մէջ,
 Սիրել եմ քեզ և այդ սէրը կը մնայ անխախտ ու անվերջ:
 Մնաս բարեալ իմ հայրենիք, ինձ կեանք, արև պարզեող,
 Մնաս բարեալ, վերջին անգամ համբուրում եմ քո սուրբ
 հող:



Թ Ա Ղ Մ Ա Ն Ք Ա Յ Լ Ե Ր Գ

Դուք զոհ գնացիք վճռական կռուում,
 Ժողովուրդի անսահման սիրոյն,
 Դուք չխնայեցիք նրա կեանքի համար
 Ո՛չ սէր, ո՛չ պատիւ, ո՛չ ազատութիւն:

Եւ ժողովուրդը կը զարթնի մի օր—
 Ազատ ժողովուրդ, վեհ և զօրաւոր,
 Ազնիւ ընկերներ, դէհ բարեալ մնաք,
 Ձեր վսեմ ուղին դուք պատուով անցաք:

Ձեզ հիտեում են նոր մարտիկ խմբեր,
 Մեռնելու պատրաստ քաջեր անձնուէր.
 Դէհ բարև մնաք,—դէհ բարև մնաք,
 Ձեր վսեմ ուղին դուք պատուով անցաք:

Խոնաւ բանդերում հալ ու մաշ եղած,
 Ձեզ չարչարում էր անգութ թշնամին.
 Տառապում էիք անյոյս շղթայուած,
 Հնազանդ ձեր դահճի քմահաճոյքին:

Իսկ բռնակալը իւր պալատներում,
 Դիհնով է վանում սև մտքեր դաժան.
 Բայց պատի վրայ խօսքերն ահաւոր,
 Գծում է արդէն աջն օրհասական:

Եւ ժողովուրդը կը զարթնի մի օր,—
 Ազատ ժողովուրդ. վեհ և զօրաւոր,
 Ազնիւ ընկերներ դէհ բարև մնաք,
 Ձեր վսեմ ուղին դուք պատուով անցաք:



ՀՆՁԱԿԵԱՆ ՁԻՆԻՈՐ

(Վ. Տ.)

Հնչակեան զինուոր, ուժգին, համարձակ,
 Շողացուր միշտ սուր, սուլեցուր գնդակ,
 Առանց տատանման անվեհեր թափով
 Դիմիր ու դիմիր դէպ վեհ նպատակ:

Նուիրիր կեանքդ քո եղբայրներին,
 Ձոհ բեր թշնամուդ քո կտրուկ սրին.
 Հակառակորդից դու մի երկնչիր,
 Դեզ, դարման եղիր արնոտ վէրքերին:

Չարութեան ոգու թոյնը սպանիչ,
 Թող հեռու կենայ սրտիցդ, ո՛վ կտրիչ,
 Իբրեւ դրօշակին հարազատ պաշտպան,
 Ատիր միշտ ոխը, բէնը քայքայիչ:

Անխարդախ հոգով միշտ առաջ դնայ,
 Բռնակալ ոյժը ջնջելու ջանայ.
 Յեղափոխութեան թշնամու հանդէպ
 Եղիր անողորմ, անգութ, անխնայ:

Կտրիչ Հնչակեան, ուժգին, համարձակ,
 Շողեցուր միշտ սուր, սուլեցուր գնդակ,
 Յեղափոխութեան սրբազան դաշտում
 Միայն այդ կը լինի քո վեհ նպատակ:



* *
(Զիւան)

Թող ես մշակ լինեմ, դու եղիր իշխան,
Պատւիս ու կրօնիս, հացիս մի դիպչի.
Թէ կուգես հաշտ ապրենք, բարի հարեան,
Պատւիս ու կրօնիս, հացիս մի դիպչի:

Անհատական իրաւունքս է ամեն ժամ,
Իմ պարտքս է՝ աշխատեմ ոչ ոքի չտամ,
Թէ կուգես իրար հետ մնանք բարեկամ,
Պապւիս ու կեանքիս, հացիս մի դիպչի:

Անպատիւ մարդու մօտ չի լինի հաւատ,
Պատիւ չեղած տեղը՝ հաց չկայ առատ,
Կը ցանկանաս, որ չանեմ քեզանից զանգատ,
Պատւիս ու կրօնիս, հացիս մի դիպչի:

Բնաւ չեմ նախանձի քո ճոխ սեղանին,
Քո ոսկուն, արծաթին, քո գանձարանին.
Այս երգով կապրի Աշըղ-Զիւանին,
Պատւիս ու կրօնիս, հացիս մի դիպչի:



Խ Ր Ի Մ Ե Ա Ն Հ Ա Յ Ր Ի Կ

Հայրիկ, Հայրիկ, քո հայրենիք
Վասպուրական մեր աշխարհ,
Վարդի փոխան քեզ փուշ բերաւ,
Ցաւերդ դառն բիւր-հազար:

Մայիսն եկաւ սոխակներով,
Վարդի թուփեր որոնեց,
Իսկ այդ թփից մացառ գտաւ,
Լալահառաչ ձայն տուաւ:

Հայրիկն ասաց «Իմ հայրենեաց
Փուշն անուշ է, քան զվարդ.
Ես այն փշոց մէջը դարձեալ
Կը որոնեմ սիրուն վարդ»:

«Այդ սայրասուր փշերն ամեն,
Փուշն կապեցէք շարիշար,
Թողէք գլխիս պսակ կապեն,
Որուն ճակատս է յօժար»:

Հայրիկ, Հայրիկ, քո սուրբ ճակատ
Արիւն-արցունք են սոս միշտ.
Փթթեալ վարդից կարմիր թերթեր
Կը պսակեն փառաց զարդ:



Ա Ն Ի Ք Ա Ղ Ա Ք

(Ա. Վ. Արարատեան)

Անի քաղաք նստէր կուլայ,
Չը կայ ըսող—մի լա, մի լա.
Կսեն քիչ է—թող մնայ լայ.
Ա՛խ, երբ լսեմ,—մի լա, մի լա:


Շատ ցաւերով կայրիմ, տապիմ,
Չունիմ մէկ մարդ հաւատարիմ,
Որ խղճալոյս դայ մօտենայ,
Հէչ չէ ըսէ—մի լա, մի լա:

Ա՛յ, հայ տղայ, խղճա ինձի,
Տես թէ քո Անին ինչպէս է.
Հէրիք ես լամ, դու չը գթամ,
Չէ՞ քո Անին ափսոս է:

Ախ ու վախով օրերս անցաւ,
 Լալէն աչքերս կուրացաւ,
 Որք մնալն ինձ վիճակուեցաւ,
 Բաղդս բնաւ ինձ մոռացաւ:

Անին եմ՝ շատ մարդաբնակ,
 Մնացել եմ դառն աւերակ,
 Իմ լաց, իմ կոծ, իմ սղաղակ
 Անտէր որբերու նմանակ:

Երբեմն էի շատ աննման,
 Հայոց քաղաք Արեւելեան.
 Աւերուեր եմ հիմնայատակ,
 Նստէր կուլամ ես միայնակ:



Բ Ա Ղ Դ

Հերիք է, անիրաւ բաղդ, հերիք է ինձ չարչարես,
 Հերիք է թշնամու պէս հալածես, դուռս քարես,
 Հերիք է, քեզ խնդրեցի, հարուածդ դադարեցուր,
 Կուրծքս ամբոց կարծելով, հերիք է նետահարես:

Ասա, քեզ ի՞նչ եմ արել, ի՞նչ վնաս եմ հասցրել,
 Իմ ունեցած գործերս մինչի երբ դու խանգարես:
 Տարին մի մարդու դուռը ուրախ սրինդ ածելով
 Հոմանի կնոջ նման շատի համար կը պարես:

Արժանաւոր տիկինը ապերժանիկ թողնելով,
 Անարժանի ճակատին մինչ երբ ոսկիներ շարես.
 Դուն էլ երկերեսանի հզօրի կողմն ես տաշում,
 Ստոր տմարտի նման վատ դերեր կը կատարես:

Կը թողնես խեղճ ու մոլոր, առանց սատար ինձ նման,
 Վայ կուտաս նրա զլխին՝ հիմա ինչ մարդ որ ճարես.

Յուսով եմ, գիտութիւնը հիմայ քու քողդ կը պատառէ,
 Աշխարհը կը կործանուի, թէ միշտ դու կառավարես:

Հաւատ, խիղճ ու խղճմտանք չունիս, որ քեզ մի բան ասեմ,
 Մէկի տունը թէ շինես, մէկ ուրիշինը կաւերես,
 Լաւն ու վատը չես ջոկում, այդ Զիւանը քաջ գիտէ,
 Հազար մարդ կողոպտելով մի հատ եզ կը զարդարես:



ԵԱՅԼՈՒՂՍ ԿՈՐԱԻ ՁԵՐ ԴՈՒՌԸ

Եայլուղս կորաւ ձեր դուռը,
 Սրտէս չի դուրս գայ մոմուռը.
 Բաղդը ինձի գցեց Գուռը,
 Սիրուն տղայ, տուր հայլուղս:

Եայլուղդ ինձի մօտ չկայ,
 Կը երգուեմ—Աստուած վկայ.
 Ով դուել է թող բերէ տայ
 Սիրուն աղջիկ, քու հայլուղդ:

Եայլուղս եարի բախշած էր,
 Ալ-աբրեշումով նախշած էր,
 Պատկերս վրէն քաշած էր.
 Սիրուն տղայ, տուր հայլուղս:

Սէրդ ինձմէն վաղուց է սառել,
 Տուած խօսքդ յետ ես առել.
 Հաւատայ, որ ես չեմ տարել
 Սիրուն աղջիկ, քու հայլուղդ:

Հօրս, մօրս ի՞նչ ջուղաբ տամ,
 Սիրտս կտրաւ ընկաւ փորս.
 Խաբար կենեմ մեծ եղբօրս,
 Սիրուն տղայ, տուր հայլուղս:

Կուղես քնիր, կուղես նստիր,
Իզուր տեղը այգքան լացիր.
Դու հաւատայ ինձի մօտ չէ
Սիրուն աղջիկ, քու եայլուդ:

Միժդէտ կը տամ եայլուդս բեր:
Դու ինձ սարէ սար մի գցէ.
Միշտ կուղեմ քեզ ինձ սիրոյ ետը,
Սիրուն տղայ, տուր եայլուդս:

Եայլուդիդ գինն է երկու շահի,
Մալխաթն ինչ է գաւի կանես,
Մօտըս լինի կը տամ քեզի,
Սիրուն աղջիկ քու եայլուդ:

Ինչո՞ւ մնաս ինձ պարտական,
Աղջիկ եմ տասնուչորս տարեկան,
Քեզի կեղնեմ ես սիրեկան,
Սիրուն տղայ, դուն ինձ փեսայ:

Շ Ո Ի Շ Ա Ն Ի Կ

(Յ. Կարինեան)

Է՞ր հեռանաս քո մայրենի աշխարհից.
Սերտ բարեկամք կարօտ թողուս քեզանից.
Մեր ամենքիս դու մայր էիր գթառատ.
Արդ հեռանաս, մեզ մութ պատէ անփարատ:

Քո սուրբ ձեռք մեր վէրքերը շատ անգամ
Լուանայիր, դեղ դնէիր ամեն ժամ.
Քո մագերից ոլորէիր վերակապ,
Քո բոլոր կեանքն աղգիդ համար էր ազապ:

Արդ հայոց զօրքն իրանց մօրից որբանայ,
Վրաց աղգը քո խնամօք պերճանայ,
Հայաստանը զրկուի իւր սուրբ Շուշանից,
Վրաստանը բուրէ հոտով քաղցրալից:

Ուր որ երթաս, ուր որ լինիս տիրունի,
Մեր սիրտ-հոգին քեզ հետ տանիս, մաքրունի.
Գնաս բարեաւ, մեր լոյս հաւատ քեզ ընկեր,
Աջն ու խաչը քեզ պահապան զօր, գիշեր:



Ի Ն Ձ Հ Ա Մ Ա Ր Ձ Է

(Բ. Պատկանեան)

Ինձ համար չէ՞ զարնան գալը,
Ինձ համար չէ՞ ծառի ծաղկիլը,
Ուրախութեան սրտի գրգիռը,
Ոչ մի բերկրանք չեն ինձ համար:

Ինձ համար չէ՞ կենաց բաղդը,
Ինձ համար չէ՞ երջանկութիւնը,
Եւ մրայօն կուսի աչքերը,
Նոց արցունք չեն ինձ համար:

Ինձ համար չէ՞ փայլուն լուսնի
Անտառ ու ձոր լուսաւորելը.
Գարնան վարդի երգչի տաղերը,
Սոխակ ու վարդ չեն ինձ համար:

Ինձ համար չէ՞ բարեկամաց
Մէկ տեղ սիրով տօն կատարելը.
Զատիկ օրուայ ուրախ ասելը
«Քրիստոս հարեաւ», չէ՞ ինձ համար:

Ինձ համար չէ ծնողաց լացը,
Ինձ համար չէ աղջկայ տխրիլը,
Գերեզմանիս վրայ արտասուելը
Բարեկամաց՝ չէ ինձ համար:

Բայց ինձ համար կուգայ ժամը,
Կ'երթամ թշնամեաց պատերազմը,
Եւ մահառիթ սպանիչ գնդակը
Անդ պատրաստուած է ինձ համար:



Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ն Ե Ր

(Ջիւան)

Աչքերդ լոյս հայ ժողովուրդ,
Բանաստեղծներդ բազմացան.
Անլօգիկայ, առանց խորհուրդ,
Ես էլ ունիմ մի երգարան:

Թէ որ բանը այսպէս գնայ,
Տուն-գլուխ մէկը դուրս կուգայ,
Անշուշտ բանաստեղծ կը դառնայ,
Թէ հորթարած՝ թէ նախբապան:

Ամեն մի խենթ, մտամոլոր,
Վաղ-վախկոտ, արիւնը պղտոր,
Յօրինում է ոտանաւոր,
Իսկոյն վաղում է տպարան:

Ձի հասկանալ քաղցր է, դառնէ,
Ճաշակ չունի, քիմքը սառն է,
Ամբոխը փող կուտայ կառնէ,
Ուր որ տեսնի մի տպած բան:

Խօսքերը սուր, ազդու ասող,
Կծու բանին կծու ասող,
Իրան թանին թթու ասող,
Քիչ կայ քեզ պէս, աշըղ Զիւան:



Հ Ա Յ Ո Յ Ա Ղ Զ Ի Կ

(Ռ. Պատկանեան)

Դու տեսնի ես երկնքումը
Պայծառ լուսին ծագելիս,
Կամ թէ կանաչ տերեւի մէջ
Կարմիր ծիրան փայլելիս:

Դու տեսնի ես ծագկոյցումը
Կամիր վարդը փրթըթած,
Շուշան, մեխակ ու նոռնուֆար
Չորս բոլորքը պար բլունած:

Բայց լուսինը խիստ խաւար է
Հայ աղջկայ առաջին,
Շուշան, մեխակ ու նոռնուֆար
Չարժեն նորա մէկ պաշին:

Երկու թշին վարդ ես նստել,
Ճերմակ ճակատին մէկ նշան.
Ժպիտը բերնից ցած չի գալիս,—
Անմեղութեան է նշան:

Տես, նա առաւ կարմրելով,
Իր ընկերից դայիրան,
Դրմբզըմբեցուց փափուկ մատով
Ու ըսկսեց լեզգինկան:

Նազուկ մէջքը ծառի նման
Տատանում էր գեղեցիկ.
Մէկ թըռչում է նա անզուաման,
Մէկ գնում է խիստ հեզիկ:

Հալում է խեղճ կտրիչների
Սիրտը՝ նորան տեսնելով.
Ծերը իրան անիծում է,
Որ ծերացաւ խիստ շուտով:



Շ Խ Ա Լ Ո Ի Ե Ր Գ Ը

(Ջիւան)

Չորանար այն ձեռքը, որ քեզի դիպաւ,
Քաջ Շխալի, գործունեայ Ստեփան.
Կոյր փորձանքը, որ Յուդայից քեզ հասաւ,
Տունդ թողեց անմխիթար Ստեփան:

Երբ որ պատմութիւնդ անել սկսենք,
Ֆէյ ու Փանդ խօսքերդ որի՞ հետ խօսենք.
Եա հու, եա մաղաթ էլ ումից լսենք,
Ծիծաղաշարժ լիզուդ ճարտար Ստեփան:

Քաջ անունդ պիտի յիշուի անպակաս,
Ընկերներուդ սրտերու մէջ միշտ դու կաս.
Կեանքիդ թելը կտրեց մահը վաղահաս,
Հաղորդութեան արժան չեղար Ստեփան:

Պատկերդ ահարկու, դու բարձր հասակ,
Ընտիր ընտանիքի լաւ հայի դաւակ.
Նամարդ մարդու ձեռքով եղար նահատակ,
Հայրենիքի թունդ սիրահար Ստեփան:

Քո մահդ Ջիւանուն սաստիկ ցաւ տուեց,
Սիրելեացդ կշաին դառար դարդ ու ցեց.
Համարեայ թէ ողջ թիֆլիզը ցնցուեց,
Շատ մարդ ողբաց քեզի համար Ստեփան:



Ը Ն Կ Ե Ր Ի Ն

(Ա. Թ.)

Ձայնդ գերի, անունդ բանդարկուած,
Մինչ երբ պիտ մնաս այդպէս մոլորուած.
Մանկական ազգանունդ շատերին յայտնի,
Ափսոս քաջութիւնդ է ուրիշ անուանի:

Արդեօղ մինչև երբ քո միակ ջանքով,
Դու պիտի փայլես օտար անունով.
Խորամիտ համբաւդ արդէն նա վաղուց
Քաջաբար հասաւ ամեն մի շրջան:

Հայրենիքդ ամբողջ քո միակ անունով,
Ղազախ դաւառը կը պարծենայ քեզնով.
Ինքդ պարտաճանաչ ուղղութեան հետևող,
Վստահ եմ, թշնամուդ կը լինես յաղթող:

Տասնեակ տարի է թողած հայրենիքդ,
Օտար երկիրներ կը շրջես անդադար.
Ազատութեան սիրոյ անունդ կը զոհես,
Ինչպէս դու լինիս միակ սիրահար:

Այստեղ էլ դու ազատ Դաշնակին յարգող,
Պատիւ անուանը անվերջ հետևող.
Նպատակդ բարի, քաջ ես ազատութեան
Ապագայի սիրելի ընդ միշտ յաւիտեան:

Ս Է Ր

(Պատիւ)

Ես չեմ մոռանայ դարնան օրերին,
 Երբ բացուի վարդը կանաչ պարտիզում.
 Կը յիշեմ միշտ քեզ պարզ գիշերներին,
 Երբ աստղեր ցոլան կապոյտ երկնքում:

Ես չեմ մոռանայ քնած ժամանակ,
 Երբ խաւարը տիրէ կապոյտ երկնքին.
 Յիշում եմ միշտ քեզ և աղօթում,
 Որ հանգստանամ միայն քո գրկում:

Ես չեմ մոռանայ քեզ այն ժամանակ,
 Երբ որ իմ դէմքս վշտից թառամի.
 Կամ այն ժամանակ երբ մահուան հրեշտակ
 Եկած նա լինի, որ հոգիս տանի:

Ես չեմ մոռանայ երբ որ դադադս
 Դնեն սառ և մութ նեղ գերեզմանում.
 Բայց կը մոռանամ քեզ այն ժամանակ
 Երբ դէմքս ծածկուի սև ու մութ հողում:



* *

(Պատիւ)

Դու ուզում ես, որ քո գրքում մի բան գրեմ անսման,
 Որ իբր թէ դու իմ անուն, չըմոռանաս յաւիտեան:
 Քան գրքոյկիդ թերթերիկում դու իմ անուն պիտ պահես,
 Չէ որ յատուկ սրտիդ խորքում աւելի մեծ տեղ ունես:



Մ Օ Ր Ս ՈՒԳԸ

Սարի լանջին ընկած որդիս,
 Կրծքիդ վարդին ես մեռնեմ.
 Մէկ ճար գտիր արուն դարդիս,
 Այս քո դարդին ես մեռնեմ:

Արնաշաղախ մենակ ընկած,
 Կանաչը քեզ անկողին.
 Անուշ քնով լուռ-մունջ քնած՝
 Չես լսում դու քո ծնողին:

Բայց, բալն ջան, աչքդ մէկ բաց.
 Մէկ ինձ նայիր, այ անսիրտ.
 Այս, իմ սրտին էլւած, վառուած,
 Մէկ ճար գտիր, քարասիրտ...

Ն Պ Ա Տ Ա Կ

Արդեօք գալու է մի օր ժամանակ,
 Որ ապրենք ազատ, խօսենք համարձակ.
 Կամ աշխարհիս մէջ պէս-պէս օրինակ
 Դառնալու է մեր սիրելին միակ:

Արդեօք գալու մի օր ժամանակ,
 Որ ազատ կեանքի միջոցներն առնենք,
 Որին դարեր շատ կարօտ մնացինք,
 Ամեն նեղ օրեր աւաղ փորձեցինք:

Արդեօք գալու է մի օր ժամանակ,
 Որ մեր սրտի մէջ գերի խօսքերը
 Ցանեւ մարդկանց մէջ ազատ, ապահով—
 Աճեն, բազմանան հողեղէն բառով:

Արդեօք գալո՞ւ է մի օր ժամանակ,
Որ լինի մարդս իր հոգուն տեղեակ.
Լեզուներս կապած, ձեռքներս շղթայ,
Զլինենք աշխարհիս կենդանի նահատակ:

Արդեօք գալո՞ւ է մի օր ժամանակ,
Որ մեր սրտի մէջ ամեն մի փափագ
Տեսնենք կատարուած, տանենք յաղթանակ—
Գոնէ վերջին օրը մեռնենք անվտանգ:

Անշուշտ գալու է մի օր ժամանակ,
Որ այդ բոլորը տեսնենք մենք հաստատ.
Կանցնեն օրերս ազատ, համարձակ,
Կը լինի յաւիտեան անմահ յիշատակ:

Դ Է Պ Ի Մ Ա Ր Տ

Ոխերիմ մըրիկներ պաշարում են մեզ,
Սև գաղտնի ոյժեր ճնշում անողորմ.
Օրհասական կռիւ ենք մտնում զուարթերես,
Ինչ է մեզ սպասում՝ չըզիտէ ոչ ոք:

Բայց մենք կը պարզենք անվախ, համարձակ,
Բանւորական գործի դրօշ փրկարար—
Փողովրդական մեծ մարտի դրօշակ—
Սուրբ ազատութեան, վեհ կեանքի համար:

Դէպ մարտ արիւնոտ և սուրբ օրինի,
Յառաջ, ընկերներ, շարքով ամենի:

Մեռնում է սովից աղքատը թշուառ,
Էլի՞ համբերենք այս անխղճութեան.
Մեր երիտասարդ քաջերի համար
Մարտափելի չէ ոչ մի տառապանք:

Ընկնելով յանուն վեհ գաղափարի,
Մարտի գոռ դաշտում չեն կորչի,
Նոցա անունը երգով պանծալի—
Բիւրաւոր մարդիկ կը յիշեն յաւէտ:

Դէպ մարտ արիւնոտ և սուրբ օրինի,
Յառաջ, ընկերներ, շարքով ամենի:

ՈՐԴՈՒ ԿՏԱԿԸ

Մայրիկ, մայրիկ, անուշ մայրիկ,
Ո՞ւր ես, հասի՞ր երգովդ մեղմիկ,
Նստէ սեցած գլխիս վերև
Ողբայ որդուդ անուշ արև:

Արև մը, որ նոր բոլորած,
Քսան գարնան վարդ հոտոտած.
Ալ բաւ է ըսեմ վարդն հոտոտես,
Գնահ, գնահ, սև հող գրկես:

Դուսն, հայրենիք, կտակ տուիր,
Ծերն ու մանուկ չըզատեցիր,
Բոցերու ծայրն երկինք հասաւ,
Խանձերու հոտն աշխարհ լցուաւ:

Լսէ մայրիկ, վերջին կտակս,
Եւ հաղորդէ իմ բաջ եղբարց,
Ազատութեան համար զոհուեն,
Վատ թշնամուն գերի չըլլան:

Ազատութիւն, ազատութիւն,
Դու մարդկութեան միակ փրկութիւն.

Ո՛ւր ես, հասիր, մեզ ողջունէ,
Գերութիւնից մեզ ազատէ:



Սե, մութ ամպեր ճակտիդ զիգորած,
Տուման հագար Ալագեազ.
Սրտումս արե հէջ չի ծագում,
Սիրտս էլ տուման Ալագեազ:

Զառ փեշերդ անցայ տեսայ,
Առանց դարդի մարդ չկայ.
Ա՛խ, իմ դարդս, ջան Ալագեազ,
Իմ դարդիս պէս հէջ չկայ:

Հէյ Մանթաշի մարմանդ հովեր,
Իմ դարդս որ ձերն եղներ.
Ձեր նուշ, անուշ ծաղկանց հոտը
Թոյնի տոթի կը փոխուէր:

Հէյ Մանթաշի նախշուն հաւքեր,
Իմ դարդս որ ձերն եղներ,
Ձեր էդ զառ-վառ խաս փետուրներ
Կը սեանային քանց գիշեր:

Հէյ վախ, կոտորան իմ թևերս,
Ընկան գիրկդ Ալագեազ.
Ա՛խ մեծ սրտիդ սեղմեմ սիրտս,
Համ, արուն լամ, Ալագեազ:

Ազատ եմ ծնունել, չեմ ուզում բռնութիւն,
Պիտի պահանջեմ սուրբ ազատութիւն.

Մինչև վերջին օրս անդադար կոչեմ,
Ունիմ իրաւունք, ես ստրուկ չեմ:

Պէտք է չըդադարեմ ես կռուելուց,
Մինչև պահանջս չառնեմ թշնամուց.
Անգութ, լաւ իմացիր, հայի զաւակ եմ,
Տունդ ու տեղդ տակն ու վրայ կանեմ:

Մահ պէտք է կոչեմ ես բացարձակ,
Ոյժս ժողոված, ազատ, հաժարձակ.
Պէտք է խորտակեմ թշնամու բանակ,
Եւ վեհ դրօշակը ձեռքիս ծածանեմ:

Մեր նահատակների կենդանի արիւն
Էժան չեմ թողնիլ գազան թշնամուն.
Մինչև վերջին շունչս ի սէր մարդկութեան,
Կը սիրեմ կռիւ յանուն փրկութեան:



ՌԱՓԱԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(Ա. Ժամուրնան)

Ո՛ւր ես հայ բըլբուլ, ձայնիդ ենք կարօտ,
Մեր հոգին էրուած, մեր սիրտը եարօտ...
Սե սուգ է պատել մեր կեանք ու օրին,
Սե թուխպ է պատել մեր սար ու ձորին.
Վայ, սե գիշերն է մեր կեանքը մաշում,
Քո լոյս երգերի կարօտն ենք քաշում.
Ո՛ւր ես, հայ բըլբուլ, երգիդ ենք կարօտ,
Ձեռ երգում էլ մեզ զարնան առաւօտ...
Մեր օրն ու արե մըթներ, սեացել,
Դըժոխքի դունն է մեզ կեանքը բացել,
Բաղդն էլ է մեզնից երես շուռ տուել,
Խեղճ հային կրակի բերանն է պցել.

Էրևում ենք անմեղ, սրտներս եարօտ,
 Քո դեղ ու դարման երգին ենք կարօտ:
 Սարէ սար ընկած՝ մենք վայ ենք կանչում,
 Բաղդաւոր ազգեր մեզ չեն ճանաչում,
 Քաղցած ենք, ծարաւ, անտէր, խղճալի,—
 Հաց, ջուր ենք ուզում՝ մեզ թոյն են տալի,
 Լեզուով չի պատմուի հայի դարդ ուցաւ,
 Հայի արիւնով աշխարհ ներկուեցաւ,
 Մեր ճամբէն դժուար, մեր ճամբէն քարօտ.
 Ո՛ր ես, հայ բըլբուլ, ձայնիդ ենք կարօտ...
 Սիրտն է մխկաում, սիրտն է սեանում,
 Ոչ ոք մեր ձէնին ականջ չի դնում.
 Էս սե օրերին մեր սիրտը եարօտ.
 Ո՛ւր ես, հայ բըլբուլ, երգիդ ենք կարօտ...
 Բըլբուլ դու մեզ հետ տանջւում ու լալիս,
 Մեր անյոյս օրին՝ յոյս էիր տալիս.
 Դուն ասում էիր—անգ իմ, մի սգա,
 «Յուսով եմ, վաղ ուշ գարունը պիտ գայ».
 Բայց, ան չը տեսանք գարուն վարդահոտ.
 Ո՛ւր ես հայ բըլբուլ, ձայնիդ ենք կարօտ...

Ծ Ե Ր Ն Վ Ա Ն Ա Յ

(Մ. Պէշեկեթաշեան)

Մութ է գիշերս, ինչպէս սիրտս
 Եւ թուի ալիք մշտափրփուր,
 Վանայ ծովում ծիածաւալ
 Հառաչանք լի են տխուր:

Գոց են ամպով աստղուն... և յոյս,
 Դեռ շատ հեռու է արշալոյս:

Ո՛վ նազանի դուստր իմ Մեհեկ,
 Շուշան և վարդ պաշտաց մերոց,

Եկնւ, ու հօրդ ծերուկ և հէք
 Առաջնորդէ ի Զորն Հայոց,

Գոց են ամպով և այլն:

Քու սիրատարի կտրիչ Արտակ
 Տխուր երգեց, ո՛հ, այս գիշեր.
 Սէրն էր երգոց իւր նպատակ
 Բայց թորգոմայ զաղետան յիշէր,

Գոց են ամպով և այլն:

«Ո՛հ, ինչուան երբ հաճոյք և սէր
 Առանց սըգի պիտի չըլլան».
 Այսպէս 'ի քնարն իւր նա երգէր
 Ու արցունքով աչք մեր լցան:

Գոց են ամպով և այլն:

Հոս են շիրիմք մեր նախահարց,
 Նոճ մի ունի ամեն դամբան.
 Երբ փոթորիկ գոռայ յանկարծ,
 Հեծեն ծնողք ոգւոց փոխան:

Գոց են ամպով և այլն:

Հին ցաւերս հեծեմ և ես,
 Ժամ է իջնեմ 'ի գերեզման.
 Երթամ վեհից հայոցն 'ի տես,
 Վանայ կոհակք թող գիտ ողբան:

Եւ դու Մեհեկ կուլաւ անյոյս.
 Ո՛հ, ոչ, գնա... գայ արշալոյս:

ՍԱՔՕՅԻ ԵՐԳԸ

Այն օրը որ ես քեզ տեսայ, էլ ուրիշ ետք չը ճարեցի,
Որովհետեւ շատ սիրեցի, որտեղ տեսայ Սեփարեցի,
Սեփարիդ զուրբան, Սաքօ ջան, ջան ջիւան, ջան:

Բոբիկ ոտով ուխտ վնացի, փառք Աստծու, մոլորազիւ հասայ.
Այն ինչ երջանիկ օր էր, որ քեզ սկզբում Դերիկ տեսայ.
Դերիկիդ զուրբան, Սաքօ ջան, ջան հոգի, ջան:

Հարցրեցի վարդապետին, ասի «ո՛վ է այս արեղան».
Ասաց «արեղայ չէ, հոգիս, հայդուկ է այս սիրուն տղան.
Հայդուկիդ զուրբան, Սաքօ ջան, ջան ասլան, ջան:

Գործը այսպէս էր պահանջում՝ քեզի ճամբեց գէնքից
զրկուած,
Հագարներու գէմ կուող մարդ, քեզ մի յրմար քիւրդ է
բռնած,
Մշու խարխուլ բանդի փոխան, Վանայ խրոխտ բանդն էր
դարձած.

Լսելով մայրիկդ լալիս է,
Մայրիկիդ զուրբան, Սաքօ ջան, ջան ասլան, ջան:

ԴՈՒ ԶՈՎ ԽՆԴԻՆՍ...

Դու զո՛վ խնդրես մայր իմ անուշ,
Եկ, մի դողար, մօտեցիր հոս.
Անլաց աչօք գիտէ զորդիդ,
Ուր իւր վէրքերն արիւնահոս:

Թուրքաց մայրեր թո՛ղ լան, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

Ինչպէս երբեմն օրրանիս մէջ,
Կակուղ ձեռքով փայփայելով,

Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիր,
Իբրեւ յիշատակ նուագելով:

Զիս հանգչեցուր ի հող, ու դուն՝
Ուրախ լուրեր տայր ի Զէյթուն:

«Նորեկ որդւոյս կենացն արեւ
Զեզի համար փայլի հայեր»,
Այսպէս յայնժամ դու կերգէիր,
Օրօրօցիս նստեալ քովեր:

Անոնց համար շիջան, ու դուն՝
Ուրախ լուրեր տայր ի Զէյթուն.

Վերջին համբոյրմ տամ քեզ մայրիկ,
Հատուցանես դայն սիրելոյս,
Վերջին անգամ գրկեմ մեր հող,
Ուր արդ կիջնիմ ի ծոցն այնլոյս:

Խաչ մը անկէ վրաս, ու դուն՝
Ուրախ լուրեր տայր ի Զէյթուն:

Բ Լ Բ ՈՒ Լ Ն Ա Ի Ա Ր Ա Յ Ր Ի

Ո՛վ դու բարեկամ այրուած սրտերու,
Խօսանակ գիշերոյ, հոգեակ վարդերու.
Երգէ բլբուլիկդ, երգէ ՚ի սարէն,
Զքաջն Հայոց Վարդան երգէ հողւոյս հետ:

Թագէի վանուց ձենիկդ ինձ դիպաւ,
Սրտիկս որ ի խաչն էր կիպ թունդ առաւ.
Ի խաչին թեկն թռայ ու հասայ,
Գտայ զքեզ ի դաշտ քաջին Վարդանայ:

Բլբուլ, քեզ համար մեր հարքն ասացին,
Թէ չէ հաւ, բլբուլ մեր Աւարային.
Նղիշեայ հոգեակն է քաղցաղրուցիկ,
Որ զՎարդան ի տեսուն կարմրիկ:

Ձրմեռն յանապատ կու գնա կայ ի լաց,
յԱրտազ գայ գարուն ի թափ վարդենաց.
Երգել ու կանչել ձայնիւ Նղիշեայ,
Թէ պատասխանիկ մ' արդեօք Վարդան տայ:

ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

(Ու. Պատկանեան)

Մայր արաքսի ափերով
Քայլամուր գնում եմ,
Հին-հին դարուց յիշատակ
Ալեաց մէջը պտրում եմ:

Բայց նոքա միշտ յեղյեղուկ
Պղտոր ջրով եզերքով,
Դարիւ-դարիւ խփելով
Փախչում էին լալագին:

Արաքս, ինչո՞ւ ձկանց հետ
Պար չես բռնում մանկական,
Դու դեռ ծովը չը հասած
Սգաւոր ես ինձ նման:

Ինչո՞ւ արցունք ցայտում ես
Քու սէզ, հպարտ աչերից,
Ինչո՞ւ արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից:

Մի պղտորիլ յատակդ,
Հանդարտ հոսէ խայտալով,

Մանկութիւնը քու կարճ է,
Շուտ կը հասնես դէպի ծով:

Վարդի թփեր թող բսնին
Քու հիւրընկալ ափի մօտ,
Սոխակները նոցա մէջ
Երգեն մինչև առաւօտ:

Մշտադալար ուռիներ
Սառ ծոցի մէջ քու ջրին,
Ճկուն ոստն ու տերև
Թո՛ղ թաց անեն տապ օրին:

Ափերիդ մօտ երգելու
Հովիւք թո՛ղ զան համարձակ,
Գառն ու ուլը քու վճիտ
Զուրը մտնին միշտ արձակ:—

Մէջքը ունցուց արաքսը,
Փրփուր հանեց իր տակից,
Ամպի նման զոռալով,
Էսպէս խօսեց յատակից:

—«Նիզախ, անմիտ պատանի,
Նիրհըս ինչո՞ւ դարեւոր
Վրդովում ես, նորոգում
Իմ ցաւերը բիւրաւոր:

«Սիրելի մահից հետ
Ե՞րբ ես տեսել, որ այրին
Ոտքից զլուխ պճնուի
Իր զարդերով թանգագին:

«Որի համար զարդարուեմ,
Որի աչքը հրապուրեմ,—
Շատերն ինձ են ատելի,
Շատերին ես օտար եմ...

«Բայց նա ինձ չէ՛ օրինակ:
Ես հայ՝ հային կը ճանչնամ,
Օտար փեսայ չուզելով,
Ես միշտ այրի կը մնամ:

«Կար ժամանակ, որ ես էլ
Շքեղազարդ հարսի պէս՝
Հազար ու բիւր պճրանքով,
Փախչում էի ափերէս:

«Յատակս պարզ ու վճիռ,
Կոհակներս ոլորուն,
Լուսաբերը մինչև այդ
Ջրիս միջին էր լողում:

«Ի՞նչս մնաց էն օրից,
Ո՞ր ջրամօտ գեղերս,
Ո՞րը իմ շէն քաղաքից,
Ո՞ր բերկրալի տեղերս:

«Տուրքը ջրի ամեն օր
Իր սուրբ ծոցէն Արարատ,
Մայրախնամ ինձ սնունդ
Պարգևում է լիառատ:

«Բայց ես այն սուրբ ջրերով
Սուրբ Յակոբի աղբիւրին,
Պիտի ցողեմ արտօրայքն
Իմ ատելի օտարին:

«Կամ կենսատու իմ ջրով,
Ափերիս մօտ կը կգած,
Իւր նամազը կատարէ
Թուրք կամ պարսիկը հօտած:


«Մինչ իմ որդիք—ո՞վ գիտէ
Ծարաւ, անօթի, անտէրունչ,
Օտար աշխարհ յաճում են
Թոյլ ոտքերով կիսաշունչ...

«Հեռու, հեռու քշեցին
Բնիկ ազգը իմ հայկեան,
Նորա տեղը ինձ տուին
Ազգ անկրօն, մոլեկան:

«Դոցա՞ համար զարգարեմ
Իմ հիւրընկալ ափերը,
Եւ կամ դոցա՞ հրապուրեմ
Ճպոռոտ, պլշած աչերը:

«Քանի որ իմ զաւակունք
Այսպէս կու մնան պանդուխտ,
Ինձ միշտ սգուոր կը տեսնէք,
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ»...

Էլ չը խօսեց Արաքսը,
Յորձանք տուեց ահագին,
Օղակ-օղակ օձի պէս
Առաջ սողաց մոլեգին:



Հ Ա Յ Ե Ր Ի Ն

Պէտք է միանալ անպայման,
Լինել մէկ սիրա մի հոգի.
Սա է միակ ազատութեան
Արդար ուղին հայ ազգի:

Թողնել քեն ու զարշլի ռի,
Մեր կործանիչ առարկան,

Որ աւերեց իւր տուն ու տեղ,

Քար-քանդ արեց Հայաստան:

Մինչ երբ արդեօք այս ատելի

Գոռոզ «եւր» մեզ պատէ,

Եղբայր եղբօր, քոյրը քրոջ

Համար դարան պատրաստէ:

Ամէն կողմից լսում ենք

Թշուառ հայոց սուգ ու լաց

Մի՞թէ սա մեզ չէ բաւական

Որ էլ մնանք քայքայուած:

Պէտքէ միանանք անպայման

Նորենք կեանքը հայկական,

Կազմենք ոյժը միութեան,

Գրկենք կոչն ազատութեան:

«Ես պատրաստ եմ ամէն բոպէ,

Լինել ծառայ միութեան,

Դէ՛հ հայ եղբայրք, շուտ միացէ՛ք

Չարդենք շղթան բռնութեան:

Ի Մ Ե Ր Գ Ը

(Պատիւ)

Ես էլ զրկուեցայ հայրենեաց բաղդից,

Կեանքս պանդխտութեան մէջը մաշուեց,

Օտարական եմ ես—որք և անտէր,

Կարօտ երջանկութեան անուշ համբոյրին:

Թափառական եմ աշխարհից աշխարհ,

Սրտովս տխուր, հոգովս անմխիթար,

Վանդակի նման անցքերում փակուած,

Երբեմն մնում եմ անվերջ մոյրորուած,

Երկինքը գլխիս միշտ մթնացած,

Փողը երեսին տխուր է պատած:

Կարծես նա ինքն էլ է ինձ նման սգաւոր,

Կարօտ է մնացել բաղդին հեռաւոր:

Օրերս գալիս են անցնում բիւրաւոր,

Հաղորդում անցքը բաղդին չքաւոր,

Կեանքից անջատած, սրտները սեպած,

Յուզուած գլորւում են—անցնում կատաղած:

Ձունիմ բերկրանք, ոչ երջանկութիւն,

Հոգիս կիսամեռ, կազմս քայքայուած,

Բազուկներս թոյլ, ոյժս սպառուած,

Ի՛նչ կարող եմ անել մահից զայրացած:

Թող լուր հասնի իմ հայրենիքին, որ

Իմ թարմ ոյժերս թառամեցան:

Եւ օտար հողում է իմ գերեզման,

Գուցէ հողդ չը տեսնեմ, զրկուեմ յաւիտեան:



Յ Ո Ր Դ Ո Ր Հ Ա Յ Ի Ն

Կենաց և մահու փողերն հնչեցին,

Հայ բաշի սրտում հուր բորբոքեցին,

Մեր եղբարց արեան հոտն ենք հոտոտում,

Եւ դարձեալ լուռ, դարձեալ համբերում:

Երբ մեր դարևոր գազան թշնամին,

Բացած բերանը գարշ դժոխային,

Ուզում է իսպառ ճնշել, կլանել,—

Այդ ճգնաժամին էլ ի՛նչ համբերել:

Ով որ կը ցանկանայ միշտ անմահ լինել,

Ահա, ասպարէզ պէտք է շտապել,

Սուր ու հրացան իւր ձեռքում բռնած
Թող փութայ այնտեղ վրէժով լցուած:

Ժլատ վաշխառուն անգոյն, անգզայ,
Դեռ ծիծաղում է սուրբ գործի վրայ,
Հեշտասէր, մոլի տուփանքի որդին,
Դարձեալ չէ ուզում օգնել իւր ազգին:

Էլ օր աւուր ես կտրիչ տղամարդ,
Պահել այդ ձեռքը առոյգ ու զուարթ,
Պինդ-պինդ բազուկներդ երկաթի նման,
Որ չես հասնելու ազգիդ փրկութեան:

Բայց մենք ամենքս, երբ որ կլինենք—
Անձնուէր, անվախ ինչպէս Անդրանիկ,
Սարեր ու քարեր ոտքի տակ առած,
Յայնժամ կը տեսնենք ազատ հայրենիք:



ԶԷՅԹՈՒՆԻ ՄԱՐՇ

Քանի թմրենք, բաւ է եղբայրք,
Շրջենք անվախ դէպի յառաջ.
Շատ ստրուկներ եղան ազատ,
Միայն մենք մնացինք հլու հնազանդ:

Զէյթունցիներ մեր զբոսանք
Է պատերազմ և արշաւանք,
Սուր, թուր, գնդակ և հրացան,
Մեր խաղալիքն են յաւիտեան:

Կեցցէ Զէթուն, ապրի Զէթուն,
Թող չտեսնէ ստրկութիւն.
Քանի ունի մեզ պէս որդիք,
Ապրէ Զէթուն, կեցցէ Զէթուն:

Յ Ա Ռ Ա Ձ

(Գ. Խ.)

Ազատ, համարձակ միմեանց ձեռք տանք
Եւ յառաջ գնանք բոլորս միասին.
Եւ թող գիտութեան զրօշակի տակ
Մեր Դաշնակցութիւնը զօրանայ կրկին:

Մենք չենք շինելու մեզ համար կռուքեր,
Ոչ երկրի վերայ, ոչ էլ երկնքում.
Եւ աշխարհային բոլոր փառքերին
Երբէք տալու չենք երկրպագութիւն:

Մենք կը քարոզենք սիրոյ ուսումը,
Մեծատուն մարդկանց, չքաւորներին.
Եւ զրա համար հալածանք կը կրենք,
Ներելով ցնորած թշնամիներին:

Երանի՛ նրան, որ միշտ նեղութեան մէջ
Դաժան հոգսերումն է կեանքը մաշել.
Եւ ծոյլ, խորամանկ ծառայի նման՝
Իրա տաղանդը գետին չէ թաղել:

Լսեցէք, եղբայրք, ձեր եղբօր խօսքին,
Քանի որ թարմ ոյժ է մեր մէջ եռում—
Մենք յառաջ դիմենք, ինչ էլ որ բախդը
Պատրաստած լինէր մեզ ապագայում:



Զ Է Յ Թ Ո Ւ Ն Ի Ք Ա Յ Լ Ե Ր Գ

Խնդացէք վեհ բնութեան զարդեր,
Նախշուն, քնքոյշ ծաղիկներ.
Ուրախացէք սիրուն վարդեր,
Պայծառ երկնքից աստղիկներ...

Անառիկ Զէյթուն, իւր անյաղթ քաջերով
Վրէժ է գոչում անվախ առիւծներով:

Երկինքը մեր գլխին պարզեց,
Հացը փոխուեց հրճուանքի,
Ստրուկ հայր արդէն ցնցուեց,
Ձեռքը մէկնեց նա զէնքի...

Անառիկ Զէյթուն և այլն:

Խորհրդաւոր քնից զարթնեց
Հայ պատանին քրտնաթոր,
Աչքը բացեց և ինչ տեսաւ
Նա, քաջերին զինաւոր...

Անառիկ Զէյթուն և այլն:

Ամեն մի հայ պարաք համարեց,
Իւր սուրբ դատը պաշտպանել.
Ազատ անկախ ու անվեհէր,
Թշնամիաց դէմ մարտնչել:

Անառիկ Զէյթուն և այլն:



(Ջիւլան)

Ձախորդ օրերը ձմրա նման կուգան ու կերթան,
Վհառելու չէ, վերջ կունենան կուգան ու կերթան:
Դառն ցաւերը մարդու վրայ չեն մնայ երկար,
Որպէս հաճախորդ շարւե-շարան կուգան ու կերթան:

Փորձանք, հալածանք և նեղութիւն ազգերի գլխին,
Ինչպէս ճանապարհի քանաւան կուգան ու կերթան:
Աշխարհը բիւրաստան է յատուկ, մարդիկը ծագիկ,
Որքան մանուշակ, վարդ, բալասան կուգան ու կերթան:

Ոչ ուժեղը թող պարծենայ, ոչ տկարը տխրի,
Փոփոխակի անցքեր զանազան կուգան ու կերթան:

Արևը առանց վախենալու ցայտում է լոյսը,
Ամպերը դէպի աղօթարան կուգան ու կերթան:

Երկիրը ուսեալ զաւակին է փայփայում մօր պէս,
Անկիրթ ցեղերը թափառական կուգան ու կերթան:
Աշխարհը հիւրանոց է Զիւան, մարդիկը հիւր են,
Այսպէս է կանոնը բնական, կուգան ու կերթան:



ՊԱՆԴՈՒԽՅԻ ԵՐԳԸ

Օտար երկիր, օտար պանդուխտ կը հեծեմ,
Դու հարենիք, քեզ յիշելով կ'արտասուեմ.
Ձը կայ ծնող, չը կան որդիք, քոյր, եղբայր,
Զիք ամուսին, որով ցաւերս մեղմանար:

Օտար երկիր, արև, աստղեր և լուսին,
Թէև պայծառ՝ ինձի խաւար կը թուին.
Բնակարանս՝ տխուր պանդուկ օտարաց,
Օդս օտար, ջուրս օտար, օտար հաց:

Ո՞ւր է հայրս, հօր է մայրս քաղցրանուն,
Ո՞ւր զաւակունքս, հօր սիրելիքս սիրասուն.
Սակայն ունիմ ժօտս Յիսուս փրկէ զիս,
Նա օտար չէ, նա իմս է, սիրէ զիս:

Վ.Ա.Ն.Ե.Յ.Ի Մ.Օ.Ր. Ե.Ր.Գ.Ը

Պղտի տղայ չեմ օրօրել, օրօրանքդ, որ քուն ըլլաս,
Հայ ախպրութիւնդ ոտքի ելան, մենակ դո՛ւ ետ պիտ մնաս.
Զարթէ, հոգիս, անուշ քունէդ թող աչքերդ լոյս տեսնեն,
Արևմուտքէն արև ծագեց, բաղդը բանեց հայ ազգին:

Զար սուլթանի ոսկի թախտը ջարդուեցաւ, վար ընկաւ,
Թախտի տակին հազար ազգաց ազատութիւն ծագեցաւ.

Ով որ շուտով ոտքի ելլէ, ազատութիւն կը գտնէ,
 Սիրուն որդիս միթէ մենակ չար լուծի տակ պիտ մտնէ:
 Մենք սուլթանին շատ խնդրեցինք կողկողացինք ու լացինք,
 Աղի-աղի արտասուքով ձեռք ու ոտքը լուացինք.
 Բայց նա չանցած պաղատանքին ողորմել հայերուն.
 Այժմ, հայ ենք, նա կը լսէ շառաչիւնը սուրերուն:
 Տուր, սիրական, քանդեմ ձեռքիդ, պալուկները,
 Ու այդ թուլիկ աջիդ մէջը մի պողպատէ սուր դնեմ.
 Ստրուկ գնա արեան դաշտը, վերադարձիր ազատուած,
 Արդեօք մի օր պիտի լսես մեր խնդիրքը, ով Աստուած:



Ա Ն Յ Ե Ա Լ Ը

Երբ որ Հայաստան կործ աւեր դարձաւ,
 Թշնամեաց ձեռքից անարդարութեամբ.
 Միակ մեր հոգին երկինք բարձրացաւ,
 Բողոքում աշնտեղ անհուն վեհութեան:
 Ամեն մի վայրկեան իւր քաղցր հայացքով,
 Դիտում է անթարթ մեր սուրբ հայեացքին.
 Եւ ալեկոծուած ծովերի նման
 Քէն ու թոյն թափում ոսոխի գլխին:

Հասել է արդէն ցանկալի ժամը,
 Այն սուրբ բողոքը գտել արձագանք.
 Եւ իւր բարձունքից մի լոյս շողշողեց,
 Խորտակեց լուծը, ջնջեց հեծկտանք:

Այլևս հայք մեզ ոչ հանդիստ է պէտք,
 Եւ ոչ դադարում մինչև յաւիտեան.
 Մինչև չը տեսնենք Մասեաց զազաքին
 Կարմիր դրօշակ սուրբ ազատութեան:

Յ Ա Ն Կ

	Երես
1. Ազատն Աստուած	3.
2. Ազնիւ ընկեր	4.
3. Անհոգ ես, չես զիտէր	5.
4. Անթիւ դարեր թափառելով	6.
5. Ա՛խ, ինչպէս կուգեմ տեսնել մեր հային	7.
6. Ահա ծագեց կարմիր արև	8.
7. Ախ վասպուրական	8.
8. Արի իմ սոխակ	9.
9. Արագ	10.
10. Ահա մայրիկ, ես գնում եմ	11.
11. Ազատութեան այն վառ սէրը	19.
12. Ազատութեան սէրը աւաղ	27.
13. Արի դու գարուն	28.
14. Ահա մի նոր ասպարէզ	29.
15. Ալ ու ալւան ես հագել	89.
16. Անի քաղաք նստեր կուլայ	95.
17. Աչքերդ լոյս հայ ժողովուրդ	105.
18. Արդեօք գալու է	105.
19. Ազատ եմ ծնունդ	108.
20. Այն օրը որ ես քեզ տեսայ	112.
21. Ազատ համարձակ միմեանց ձեռք տանք	121.
22. Բերդիցը դուրս ելայ	11.
23. Բօյըդ բարձր	12.
24. Բարի զեղեցիկ	13.
25. Բարով եկար սիրուն կուռնկ	14.
26. Գարահիսար լերան կրճքին	19.
27. Գարնանային գուարթ օր էր	21.
28. Դարձեալ փայլեց Սասնոյ գլխին	23.
29. Դարդս լացէք	24.
30. Դուն խելօք, հաշով վաճառական ես	24.
31. Դուն ուզում ես, որ հնչեցնեմ	25.
32. Դու անցար հերոս	90.



33. Դու զոհ գնացիր	92.
34. Դու տեսել ես երկնքումը	101.
35. Դու ուզում ես, որ քո գրկում	104.
36. Դու գով խնդրես	112.
37. Ես լսեցի մի անոյշ ձայն	26.
38. Եթէ կամինք փրկել թշուառ հայրենիք	30.
39. Ես մշեցի ճամբորդ եմ	31.
40. Եթէ մի օր, անուշ ընկեր	32.
41. Ես տեսայ նրան	33.
42. Ես զաւակ չունեմ	78.
43. Եայլուղս կորաւ ձեր դուռը	97.
44. Ես չեմ մոռանայ	104.
45. Ես էլ զրկուեցայ	118.
46. Երբ որ Հայաստան	124.
47. Զէնքերս տուր մայրիկս	34.
48. Զինեաժ, պատրաստուած	34.
49. Է՞ր հեռանաս քո մայրենի աշխարհից	98.
50. Թուրքը լսաւ ունունդ Չաւուշ	20.
51. Թող փչէ քամին	35.
52. Թիկունքդ լայն, թեւերդ ուժգին	37.
53. Թող երգէ բլրուլ	38.
54. Թէ իմ ալևոր հերքս սկնային	50.
55. Թշուառութիւնը թունաւոր խայթով	79.
56. Թող ես մշակ լինեմ	94.
57. Իբրեւ արծիւ սաւառնում ես	81.
58. Ինձ մի խնդրիր, ես չեմ երգի	42.
59. Ի՞նչ անենք	42.
60. Իմ կեանքիս մէջ չեմ մոռանայ	44.
61. Ինձ համար չէ դարնան գալը	99.
62. Լոեց: Ամպերը եկան ծածկեցին	45.
63. Լուսին չկար, մութ գիշեր էր	45.
64. Խնուսից եկած հայ զինւորները քաջ	46.
65. Խաղաղ դաշտի որդիք	47.
66. Խնդացէք վեհ բնութեան զարդեր	121.
67. Ծիծեռնակ. ծիծեռնակ	48.
68. Ծուխը ամպի պէս	49.
69. Ծագեց արև ազատութեան	50.
70. Կտրուենք այս հին աշխարհից	36.

71. Կռուակ, ուստի կուգաս	51.
72. Կենաց փշուր ասպարէզը	52.
73. Կարկուտ տեղաց Խանասորի դաշտումը	55.
74. Կովկասի քաջեր	56.
75. Կռուեցէք տղերք	57.
76. Կենաց և մահու փողերն հնչեցին	119.
77. Հէրիք է մայրիկ, դու ինձ փայփայես	53.
78. Հայ երիտասարդներ, շուտ շտապեցէք	53.
79. Հեռաւոր երկիր	54.
80. Հայաստանի փառք ու պարծանք	58.
81. Հիմի է՛լ լուենք	59.
82. Հայաստանի անկախ Սասուն	61.
83. Հայրենիք սրբազան	62.
84. Հայաստանից եկած զինւոր	63.
85. Հազիւ լրացաւ քսան ու մէկ տարիս	61.
86. Հասակս քսան տարեկան	
87. Հնչակեան զինւոր	93.
88. Հայրիկ, հայրիկ քո հայրենիք	94.
89. Հէրիք է անիրաւ բաղդ	96.
90. Չայն տուր, ով ծովակ	65.
91. Չայն տուր, ով ֆիդայ	66.
92. Չեռքերս կապած, ոտքերս շղթայած	66.
93. Չայն մը հնչեց էրզուրումի հայոց լեռներէն	68.
94. Չախորդ օրերս ձմրան նման	122.
95. Չայնդ գերի, անունդ բանտարկուած	103.
96. Ճշում են հա՛ն անիւները	13.
97. Մանում է թելը	15.
98. Մի գեղեցիկ, պարզ գիշեր էր	16.
99. Մեր հայրենիք թշուառ անտէր	70.
100. Մենք պէտք է կռուենք	71.
101. Մենք անկեղծ զինւոր ենք	72.
102. Մենաւոր բանտի հիւանդանոցում	77.
103. Մնաս բարեաւ, իմ հայրենիք	91.
104. Մայրիկ, մայրիկ, անուշ մայրիկ	107.
105. Մութ է գիշերս	110.
106. Մայր Արաքսի ափերով	114.
107. Յուլիս ամսի քսանուհինգին	80.
108. Յիշիր ժամը այն երջանիկ	81.

109. Նպատակիս դէր մի մասը կատարուէր	73.
110. Նպատակիս հասնեմ միայն	82.
111. Շլիքը արեւմտ	74.
112. Ողբում է ծովը	55.
113. Ոլոր-մոլոր Կուրն էր գալիս	73.
114. Ով որ քաջ է ինձ կսպասէ	76.
115. Ողորմութիւն ես աղերսում	80.
116. Ո՞վ չի սիրել	83.
117. Որսկան ախպէր	84.
118. Ուրեմն մնաք բարով	84.
119. Ոխերեմ մըրիկներ պաշարում են մեզ	106.
120. Ուր ես հայ բլբուլ	109.
121. Ով դու բարեկամ	113.
122. Չորանար այն ձեռքը	102.
123. Պարզիր աղբիւր	85.
124. Պէտք է միանալ	117.
125. Պզտի տղայ չեմ օրօրել	123.
126. Սար ու ձոր ընկած	17.
127. Սիրում եմ ես	64.
128. Մնարիս մօտ լուռ գիշերին	68.
129. Սառը նկուղի խոնաւ անկիւնում	78.
130. Սիրելի դաշոյն	86.
131. Սիրում էի ես գարունը	87.
132. Սարի լանջին ընկած որդիս	105.
133. Սև մութ ամպեր	108.
134. Վէրքերով լի ջան ֆիդայ եմ	89.
135. Տեսնում ես ինչպէս մանուշակը լուռ	75.
136. Տուր ձեռքդ եղբայր	88.
137. Քաղցրիկ հայրենիք	18.
138. Քաղցրախօս պօէտ	86.
139. Քո թարմ շիրիմին	91.
140. Քանի թմրենք, բաւ է եղբայր	120.
141. Օ՛, անմեղ տեղից քանի գուր տանջանք	28.
142. Օտար երկիր, օտար պանդուխտ	123.

18166

2013

